Երեխայի սեռական շահագործման և բռնության (ԵՍՇԲ) կանխարգելումն ու վերացումը

Ազգային արձագանքման մոդել

WePROTECT GLOBAL ALLIANCE
END CHILD SEXUAL EXPLOITATION ONLINE

2016թ.-ի նոյեմբեր

WePROTECT GLOBAL ALLIANCE
END CHILD SEXUAL EXPLOITATION ONLINE

Երեխայի սեռական շահագործման և բռնության (ԵՍՇԲ) կանխարգելումն ու վերացումը

Ազգային արձագանքման մոդել

2016թ.-ի նոյեմբեր

Բովանդակություն

Երեխայի սեռական շահագործման և բռնության կանխարգելումն ու վերացումը 1
Կարողություն 1 – Առաջնորդություն 4
Կարողություն 2 – Հետազոտություն, վերլուծություն և մշտադիտարկում 6
Կարողություն 3 – Օրենսդրություն 8
Կարողություն 4 – Նշանակված իրավապահ մարմին 10
Կարողություն 5 – Դատական իշխանություն և դատախազություն 12
Կարողություն 6 – Հանցագործի կառավարման գործընթաց 14
Կարողություն 7 – Նկարների բազայի հասանելիություն 16
Կարողություն 8 – Համալիր աջակցություն 18
Կարողություն 9 – Երեխայի պաշտպանության մասնագետներ/ աշխատակազմ 20
Կարողություն 10 – Փոխհատուցում, հատուցում և բողոքարկման մեխանիզմներ 22
Կարողություն 11 – Երեխայի համար վստահության հեռախոսային ծառայություններ 24
Կարողություն 12 – Երեխայի սեռական շահագործման և բռնության դեպքերի համար թեժ գիծ 26
Կարողություն 13 – Կրթական ծրագիր 28
Կարողություն 14 – Երեխայի մասնակցություն.....30
Կարողություն 15 – Հանցագործին աջակցող համակարգեր 32
Կարողություն 16 – Նյութերի հեռացման ընթացակարգ 34
Կարողություն 17 – ԵՍԾԲ վերաբերյալ հաղորդումը 36
Կարողություն 18 – Նորարարական լուծումների զարգացում 38
Կարողություն 19 – Համատեղ հասարակական պատասխանատվություն.....40
Կարողություն 20 – Էթիկապես պատշաճ և ոչ ֆորմալ լրատվական հաղորդումներ 42
Կարողություն 21 – Համընդհանուր տերմինաբանություն.....44

Երեխայի սեռական շահագործման և բռնության կանխարգելումն ու վերացումը

Ազգային արձագանքման մոդել

2015 թվականին Աբու Դաբիում տեղի ունեցած գագաթնաժողովի ժամանակ կառավարությունները և կազմակերպությունները ձեռք են բերել համաձայնություն իրենց երկրներում հաստատել երեխայի առցանց սեռական շահագործման վերաբերյալ ազգային արձագանքման մոդել և իրականացնել այն՝ հիմնվելով ՄԵՆՔՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ (WePROTECT) համաշխարհային դաշինքի ազգային արձագանքման մոդելի (այսուհետ՝ ԱԱՄ) վրա: Այս փաստաթուղթը հանդիսանում է ԱԱՄ ուղեցույց պետությունների և կազմակերպությունների համար՝ աջակցելու վերջիններիս իրականացնել ստանձնած հանձնառությունը: Այսպիսով, այս մոդելը միտված է օգնել պետություններին կազմել իրենց ԱԱՄ-ն երեխայի առցանց սեռական շահագործման վերաբերյալ: Դա նշանակում է, որ այս փաստաթղթին մեկուսացված անդրադարձն անթույլատրելի է և առավել լայն կարողություններ են անհրաժեշտ երեխայի սեռական շահագործման և բռնության (այսուհետ՝ ԵՍՇԲ) կանխարգելման ու վերացման համար:

Համաձայն մոդելի՝

- պետությունը կարող է գնահատել ազգային արձագանքման մոդելը և բացահայտել թերությունները,
- թերությունները վերացնելու ուղղությամբ իրականացնել առաջնային ջանքեր,
- ընդլայնել միջազգային փոխըմբռնումն ու համագործակցությունը:

Այս Մոդելը համակարգում է տվյալ բնագավառի փորձագետների և պրակտիկ աշխատողների երկար տարիների աշխատանքը և կառուցված է գործող միջազգային համակարգի վրա՝ ԵՍՇԲ-ն կանխարգելման և վերացման նպատակով: Այն հիմնված է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի և այդ կոնվենցիայի՝ Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրության վրա: Մոդելը հիմնված է նաև 1996 թվականին Շվեդիայում, 2001 թվականին՝ Ճապոնիայում և 2008 թվականին՝ Բրազիլիայում տեղի ունեցած երեք համաշխարհային գագաթաժողովների արդյունքում կազմված՝ երեխաների և դեռահասների սեռական շահագործման վերաբերյալ գործողության օրակարգերի վրա:

Մոդելը չի հայցում գործողությունների սահմանում կամ միայն մեկ մոտեցման ամրագրում: Դրա նպատակն է նկարագրել երեխաների արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ կարողությունները, ընդգծել այն պետությունների լավագույն փորձը, որոնք արդեն օգտագործում են այդ կարողությունները, ինչպես նաև նշել այն կազմակերպությունները, որոնք կարող են հետագայում տրամադրել ուղեցույց և աջակցել այն պետություններին, որոնք ցանկանում են զարգացնել կամ ուժեղացնել իրենց առկա կարողությունները:

Կարևոր է, որ այս Մոդելը հնարավորություն է տալիս ցանկացած պետությանը՝ անկախ ելակետային տվյալներից, ճանաչել կարողությունների մեջ առկա ցանկացած թերություն և սկսել ծրագրել դրանց շտկումը: Այս Մոդելի օգտագործումը կարող է օգնել պետություններին մշակելու գործողություններ, որոնք կնպաստեն ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակի թիրախների իրագործմանը, մասնավորապես՝ նպատակ 16.2-ի համար՝ վերջ դնել երեխաների նկատմամբ բոլոր տեսակի բռնություններին ու խոշտանգումներին: Այն նույնպես կարող է նպաստել նպատակներ 8.7-ի և 5.2.-ի իրագործմանը:

Մինչև պետությունները կզարգացնեն իրենց սեփական անհատական մոտեցումներն ընդհանուր համատեքստի և կարողությունների շրջանակում՝ հույս ունենք, որ շահագրգիռ կողմերի հաղորդակցումը և համագործակցությունն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակում առավել կամրապնդվի:

Կարողությունների իրականացումը կհանգեցնի երեխաներին առցանց ԵՍՇԲ-ից պաշտպանության արդյունավետության: Բարելավման այլ միջոցների հետ համատեղ դրանք մանրամասն կերպով

ներառված են Մոդելում, և վերջիններիս տեղին և արդյունավետ օգտագործումը կարագացնի և կբարելավվի արդյունքները:

Հուսանք, որ Ձեզ համար այս Մոդելը կդառնա երեխաներին առցանց ԵՍՇԲ-ից պաշտպանելուն ուղղված կարողություններին նպաստող օգտակար գործիք, որը կհանգեցնի զոհերի և հանցագործների կարիքներին արձագանքման պատշաճ մակարդակի ապահովմանը: ՄենքՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ հաջորդ գագաթնաժողովին մենք ակնկալում ենք Ձեր տեղեկատվությունը, թե ինչպես է այս Մոդելը նպաստել ազգային, տարածաշրջանային և միջազգային արձագանքման զարգացմանն ու համակարգմանը՝ ուղղված երեխաներին առցանց ԵՍՇԲ-ից պաշտպանելուն: Ինչպես նաև, մենք սպասում ենք Ձեր կարծիքներին, որոնք կարելի է ուղարկել ՄենքՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ համաշխարհային դաշինքի կայքի միջոցով՝ www.weprotect.org: Սա դինամիկ գործիք է, որի հետագա տարբերակները և ուղեցույցները նույնպես ենթակա են հրապարակման:

Բարելավման միջոցներ	Կարողություններ		Արդյունքներ	
Միջոլորտային, բազմաոլորտային համագործակցություն	**Ռազմավարություն և կառավարում**		Ամենաբարձր մակարդակի ազգային պարտավորություն ԵՍՇԲ կանխարգելմանն ու արձագանքին:	Կառավարության և իրավապահ մարմինների ամենաբարձր մակարդակներում ԵՍՇԲ վերաբերյալ համակողմանի ընկալում: Մի քանի շահառուների հետ աշխատելու ցանկություն և համակարգելու ջանքերը, որպեսզի երաշխավորվի տուժածների պաշտպանության ուժեղացումը և հանցագործների նկատմամբ ուժեղացված արձագանքը
	1	Առաջնորդություն հաշվետու ազգային կառավարում և վերահսկողական կոմիտե		
	2	Հետազոտություն, վերլուծություն և մշտադիտարկում ԵՍՇԲ ռիսկերի և արձագանքի ազգային իրավիճակային վերլուծություն, չափանիշներ/ցուցիչներ		
	3	Օրենսդրություն՝ հանցագործներին նախաքննելու և զոհերին պաշտպանելու համար համապարփակ և արդյունավետ իրավական հիմք		
Քրեորեն հետապնդելու պատրաստակամություն, գործող արդարադատության համակարգի և օրենքի գերակայություն	**Քրեական արդարադատություն**		ԵՍՇԲ դեպքերի արդյունավետ և հաջողակ նախաքննություններ , մեղադրանքներ և հանցագործների կառավարում:	Իրավապահ մարմինները և դատական համակարգը պետք է զինված լինեն անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով, համակարգերով և գործիքներով, որոնք անհրաժեշտ են զոհակենտրոն նախաքննություն կատարելու և դրական դատական արդյունքներ ապահովելու համար: ԵՍՇԲ հանցագործները պետք է կառավարվեն և կրկնահանցանքը պետք է կանխարգելվի:
	4	Նշանակված իրավապահ մարմին՝ ազգային գործունեության ոլորտ, վերապատրաստված աշխատակիցներ, նախաձեռնող և արագ արձագանքող քննիչներ, զոհակենտրոն, միջազգային համագործակցություն		
	5	Դատական իշխանություն և դատախազություն՝ վերապատրաստված, զոհակենտրոն		
	6	Հանցագործի կառավարման գործընթաց՝ ազգային և միջազգային մակարդակով քրեական արդարադատության համակարգում իրենց կանխելու կրկնահանցագործությունից		
Հանցագործության մասին հաղորդում ներկայացնելուն աջակցող միջավայր	7	Նկարների բազայի հասանելիություն՝ Ինտերպոլի տվյալների բազային միացված ազգային տվյալների բազա		
Իրազեկ և աջակից հասարակություն ու մասնագետներ՝ պատրաստ երեխաների հետ և համար աշխատելու	**Զոհ**		Համապատասխան աջակցության ծառայություններ երեխաների և դեռահասների համար	Երեխաները և դեռահասները պետք է տեղեկացված և զինված լինեն, ինչպես իրենք իրենց պաշտպանել սեռական շահագործումից և բռնությունից : Ծնողները, խնամողները և երեխաներին խնամող մասնագետները պետք է ավելի լավ պատրաստված լինեն երեխաներին սեռական շահագործումից և բռնությունից ապահով պահելու համար՝ ներառյալ սեռական բռնության միջավայրում արգելքներ դնելով:
	8	Համալիր աջակցություն՝ նախաքննության, հետապնդման և խնամքից հետո տրամադրվող ինտեգրված ծառայություններ		
	9	Վերապատրաստված, համակարգված և զոհին աջակցություն ցուցաբերելու պատրաստակամ երեխայի պաշտպանության մասնագետներ/ աշխատակազմ՝		
	10	Փոխհատուցում, հատուցում և բողոքարկման մեխանիզմներ՝ հասանելի գործընթացներ		
	11	Երեխայի համար վստահության հեռախոսային ծառայություններ՝ զոհի մասին հաղորդելու, աջակցություն ցուցաբերելու և շարունակական օգնության ծառայություններին ուղղորդելու		
Բավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսներ	**Հասարակական**		ԵՍՇԲ կանխարգելված է	Երեխաները և դեռահասները տեղեկացված են և զինված են իրենց ԵՍՇԲ պաշտպանելուց. Ծնողները, խնամողները,ուսուցիչները և երեխաների խնամքով զբաղվող մասնագետներն ավելի լավ են պատրաստված երեխաներին սեռական շահագործումից և բռնությունից ապահով պահելու համար, ներառյալ՝ սեռական շահագործումից արգելքներ ստեղծելով:
	12	ԵՍՇԲ դեպքերի համար թեժ գիծ՝ ԵՍՇԲ առցանց նյութերի մասին հաղորդելը, կապ հաստատելն իրավապահ մարմինների և համացանցի ծառայությունների մատակարարների հետ		
	13	Կրթական ծրագիր՝ երեխաների/դեռահասների, ծնողների/խնամողների, ուսուցիչների, պրակտիկ աշխատողների, կրոնական ներկայացուցիչների համար		
	14	Երեխայի մասնակցություն՝ Երեխաները/դեռահասները ռազմավարության և փորձնական աշխատանքների ձևավորման փուլում ունեն ձայնի իրավունք		
	15	Հանցագործին աջակցող համակարգեր՝ բժշկական, հոգեբանական, ինքնակարգավորման աջակցության, իրազեկություն		
Ազգային իրավաբանական և ռազմավարական շրջանակներ երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային և այլ միջազգային ու տարածաշրջանային չափանիշներին համապատասխան:	**Արտադրություն**		Բարձր տեխնոլոգիաների ոլորտում մատակարարին անհրաժեշտ է ներգրավվել ԵՍՇԲ կանխելու և վերացնելու վերաբերյալ լուծումներ առաջարկելու գործընթացում:	Բարձր տեխնոլոգիաների ոլորտում մատակարարն ունի իշխանություն և ցանկություն արգելափակելու և հեռացնելու առցանց ԵՍՇԲ վերաբերյալ նյութը և ակտիվորեն անդրադառնալ ազգային ԵՍՇԲ վերաբերյալ խնդիրներին: Բարձր տեխնոլոգիաների ոլորտում մատակարարը պետք է ակտիվորեն հաղորդի առցանց ԵՍՇԲ վերաբերյալ դեպքերը:
	16	Նյութերի հեռացման ընթացակարգ՝ ԵՍՇԲ վերաբերյալ առցանց նյութերի հեռացումը և արգելափակումն ազգային մակարդակով		
	17	ԵՍՇԲ վերաբերյալ հաղորդումները, որոնք թույլ կտան արտադրությանը ձևավորել գործընթացներ և հատկացնել ռեսուրսներ ԵՍՇԲ առցանց դեպքերը հայտնաբերելու և իշխանություններին հաղորդելու համար, ներառյալ՝ փոխանցելով նյութն իրավապահ մարմիններին և այլ նշանակված գործակալություններին:		
	18	Նորարարական լուծումների զարգացում՝ ներգրավվել բարձր տեխնոլոգիաների ոլորտում մատակարարին՝ օգնելու անդրադառնալ ԵՍՇԲ վերաբերյալ խնդիրներին		
	19	Համատեղ հասարակական պատասխանատվություն՝ արդյունավետ երեխայակենտրոն ծրագիր		
ԵՍՇԲ-ի վերաբերյալ տվյալներ և փաստեր	**Լրատվամիջոցները և հաղորդակցությունը**		Հանրության, մասնագետների և ռազմավարություն կազմողների շրջանակում իրազեկության բարձրացում:	Հավանական ապագա հանցագործները կկանխարգելվեն ԵՍՇԲ ենթարկելուց և կրկնահանցագործությունները կնվազեն:
	20	Էթիկապես պատշաճ և ոչ ֆորմալ լրատվական հաղորդումներ՝ խնդրի վերաբերյալ իրազեկության բարձրացում և ճշգրիտ ընկալում		
	21	Համընդհանուր տերմինաբանություն՝ Ուղեցույցներ և դրանց կիրառումը		

Կարողություն 1 – Առաջնորդություն

Սահմանում

- Արդյունավետ կառավարմամբ պատասխանատուները միավորվում են երեխաներին առցանց սեռական շահագործումից պաշտպանելու համար, հետևաբար այն հանդիսանում է բազմակողմ շահառուների միջմասնագիտական ազգային մարմին կամ մարմիններ (այսուհետ՝ մարմին):
- Գոյություն չունի մեկ ձևանմուշ, որին բազմակողմ շահառուն պետք է հետևի, նա կարող է պատասխանատու լինել ամբողջական կառավարման համար և վերահսկել պետության կարողությունը և հնարավորությունը՝ կանխելու և արձագանքելու երեխաների առցանց ԵՍՇԲ դեպքերին կամ պարզապես գործել որպես կառավարության, արդյունաբերության և քաղաքացիական հասարակության աշխատանքները համակարգող մեկ մարմին: Այն պետություններում, որտեղ արդեն լիարժեքորեն ստեղծվել է երեխաների պաշտպանության խումբ կամ մարմին, որը զբաղվում է թվային ընդարձակ քաղաքականությամբ, կիբեռանվտանգությամբ, երեխաների կամ նրանց իրավունքների նկատմամբ բռնությամբ, ենթադրաբար, այս գործառույթն արդեն իսկ կարող է օգտագործվել որպես առկա մեխանիզմ:
- Կատարյալ կլինի, եթե տվյալ մարմինը հանդիսանա կառավարության կողմից ղեկավարվող մարմին: Արդյունավետ արձագանքման հասնելու համար անհրաժեշտ է, որ քաղաքացիական հասարակությունը և արդյունաբերության ներկայացուցիչները նույնպես ամբողջությամբ ներգրավված լինեն:
- Ազգային մարմինը կարող է ձևավորել բարձրաստիճան ներկայացուցչություն համապատասխան պետական գերատեսչություններից (որոնք են՝ Ներքին գործերի նախարարություն, Արդարադատության նախարարություն, սոցիալական ապահովություն/ երեխաների ծառայություններ, կրթություն, առողջապահություն, հեռահաղորդակցություն), իրավապահ մարմիններից, դատական համակարգից, հասարակական կազմակերպություններից, տեխնոլոգիա/ՏՀՏ արդյունաբերությունից և այլ համապատասխան արդյունաբերական ոլորտներից (ինչպիսին է զբոսաշրջությունը). կրոնական կազմակերպություններից և այլ մասնագիտացված գործակալություններից, որոնք աշխատում են առցանց ԵՍՇԲ-ների և երեխաների նկատմամբ բռնության դեմ:
- Մարմինը կարող է պատասխանատու լինել առցանց ԵՍՇԲ-ի վերաբերյալ ազգային արձագանքը մոբիլիզացնելու, ինչպես նաև՝ համակարգելու, մատնանշելու և այն գործողությունները խթանելու համար, որոնք ուղղված կլինեն ԱԱՄ-ում նկարագրված թերությունները վերացնելուն:
- Մարմինը կարող է նաև աջակցել տարածելու ԵՍՇԲ-ի վերաբերյալ գիտելիքը և փորձը ծառայություններ մատուցող ազգային և տեղական կազմակերպություններին և խրախուսել բազմակողմ-շահառուների մոտեցումն ազգային և տեղական մակարդակում:
- Մարմինը կարող է բացահայտել, ապահովել և համակարգել միջազգային կազմակերպությունների կողմից պահանջվող ցանկացած աջակցություն և դառնալ միջազգային նախաձեռնությունների և ԵՍՇԲ-ին առնչվող հարցերի ցանցի ազգային կոնտակտային մարմին: Ներպետական մակարդակում նա նույնպես պետք է ստեղծի այլ ազգային ռազմավարությունների, հարթակների և գործողությունների ծրագրի հետ կապը՝ առնչվող երեխաների նկատմամբ բռնություններին, իսկ առավել ընդհանրական՝ երեխաների իրավունքների, կիբեռանվտանգության և թվային քաղաքականության հետ:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Հնարավորություն կընձեռի գործունեության ազգային ծրագրին՝ կանխելու և վերացելու ԵՍՇԲ-ն՝ հասնելով համընդհանուր համաձայնության, առաջընթացը ենթարկելով մշտադիտարկման և ներկայացնելով հաշվետվություններ:
- Առավել լայնածավալ մասշտաբով փորձի և տեղեկատվության փոխանակումը հնարավորություն կընձեռի յուրաքանչյուր շահառուին լինել տեղեկացված և բարելավել առկա փորձը, ինչը կհանգեցնի ազգային մակարդակով ծառայությունների և կարողությունների բարելավմանը, իսկ միջազգային մակարդակով կնվազեցնի հանցագործների կողմից նոր հանցագործություններ կատարելու կարողությունը:
- Ներպետական մարմնին հնարավորություն կընձեռնվի ակտիվ և համակարգված մասնակցություն ունենալ համընդհանուր նախաձեռնություններին՝ վերացնելու առցանց ԵՍՇԲ-ն, ինչպիսինն է՝ ՄԵՆՔՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ, որը կբարելավի միջազգային համագործակցությունը և հնարավոր կդարձնի լավագույն փորձի փոխանակումը միջազգային մակարդակով:
- Ներպետական մարմնի օգտագործումը միջազգային հանրության կողմից ցանկացած աջակցության համակարգման համար, կարող է երաշխավորել, որ տվյալ աջակցությունը կենտրոնացված է զարգացման առաջնային ոլորտների վրա՝ ելնելով պետության կարիքներից:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- ՏՀՏ-ի հետ կապված չարաշահումների, շահագործմանը և բռնությանն առնչվող Ազգային ռազմավարությունների վերաբերյալ կառավարությունների համար մշակվող ձեռնարկը գործընկերների հետ համատեղ համագործակցության շնորհիվ կազմվում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից և պատրաստ կլինի 2017 թվականին:

Կարողություն 2 – Հետազոտություն, վերլուծություն և մշտադիտարկում

Սահմանում

- Ներկայումս հստակ բարձրաձայնած են պետությունների կողմից ԵՍՇԲ-ի վտանգի, խոցելիության, ռիսկի և արձագանքի բնույթն ու մասշտաբը (հետախուզությունը և վերջնական հիմնավոր ապացույցներով ներկայացրած գնահատականը): Ներպետական մարմնի ներկայացուցիչները միաձայն հավանության են արժանացրել վերջնական եզրակացությունը (տես՝ Կարողություն 1- Առաջնորդություն)՝ որպես հավաստի և ամբողջական տեղեկացվածություն:
- ԵՍՇԲ-ը կանխարգելելու և վերացնելու ուղղությամբ որևէ գործողության ձեռնարկումը պետք է հիմնված լինի հետախուզման և ապացույցների վրա: Ներպետական մարմնի կողմից համաձայնեցված եզրակացությունը պետք է պարունակի առաջընթացի, առաջնահերթության և ԵՍՇԲ-ի վերաբերյալ պետության արձագանքման կիրառման, ինչպես նաև համապատասխան ռազմավարության և փորձի վերաբերյալ տեղեկատվություն:
- Ներպետական համաձայնեցված արձագանքը պետք է պարունակի չափելի արդյունքներ և դասիչներ, ինչպես նաև առաջընթացը պետք է հաճախակի վերահսկվի, իսկ արդյունքները՝ գնահատվեն և մշտադիտարկվեն: ԵՍՇԲ գործողությունները կարող են ընդգրկվել երեխաների պաշտպանության, երեխաների նկատմամբ բռնության և երեխաների իրավունքներին առնչվող ցանկացած ռազմավարության, ծրագրերի կամ մարտավարության մեջ:
- Անհրաժեշտ է անցկացնել ԵՍՇԲ վերաբերվող հարցերի շարունակական հետազոտություն՝ համոզվելու համար, որ ձեռնարկված գործողությունն անհրաժեշտ է և ոչ ժամանակավրեպ, ինչպես նաև հետազոտության որակով ու բնույթով է հիմնավորվում որոշման ընդունման ակտիվ մշտադիտարկումը:
- ԵՍՇԲ վերաբերվող միջազգային և տարածքային ստանդարտներին համապատասխանությունը պետք է մշտադիտարկվի և գնահատվի:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Ներգրավված կազմակերպությունների քանակի և մասշտաբի շնորհիվ համապատասխան ներպետական հետազոտությունը և վերլուծությունը կարող է ստեղծել հեղինակավոր տեսակետ ԵՍՇԲ վտանգի, խոցելիության, ռիսկի և պատասխանի վերաբերյալ:
- ԵՍՇԲ վերաբերյալ ներպետական արձագանքման որակի շարունակական զարգացմանը և բարելավմանը կարելի է հասնել արդյունավետ հետազոտությունների, կանոնավոր մշտադիտարկման և գնահատման շնորհիվ:
- Հետազոտության և վերլուծության շնորհիվ կբացահայտվեն ԵՍՇԲ նոր կամ նորաստեղծ ուղղություններ և օրինակներ, որոնք հնարավորություն կընձեռեն զարգացնելու արդյունավետ ռազմավարական ծրագրեր, երեխաների պաշտպանության և հանցավորության կանխման արդյունավետ կարողություններ:
- Հետախուզման և ապացույցների վրա հիմնված ռազմավարությունը և փորձը կերաշխավորեն, որպեսզի առաջնահերթություն տրվի այլ ոլորտների այն գործողությանը, որտեղ առավել վտանգավոր վնասն է հասցվել երեխաներին և ամենաէական կարողությունների բացերը տեսանելի են:
- Գործողությունների կայուն և կանոնավոր մշտադիտարկումը, առաջընթացի մասին հաղորդումը, ինչպես նաև նախկին ձեռքբերումների վերաբերյալ ճշգրիտ եզրակացությունները կօգնեն կառավարությանը հաղորդել առաջընթացի մասին համապատասխան միջազգային և տարածաշրջանային տեղեկատվությունը՝ ըստ ստանդարտների և թիրախների: Այն ներառում է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան և նրան կից Մանկավաճառության,

երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությունը և 2030թ.-ի Օրակարգը, մասնավորապես՝ Կայուն զարգացման նպատակ 16.2-ը՝ վերջ դնել երեխաների նկատմամբ բոլոր տեսակի բռնություններին ու խոշտանգումներին:

Լավագույն փորձ

- Նվազագույն առումով վերլուծությունը պետք է գնահատի ԵՍԾԲ առկա վտանգը, թե ինչպե՞ս է այն արտահայտվում և ո՞վ է առավելապես վտանգված, գնահատի պետության խոցելիությունն այս վտանգի նկատմամբ, գնահատի առկա համակարգային արձագանքը, վերանայի և գնահատի համապատասխան օրենսդրության կիրառումը, ինչպես նաև ռազմավարությունը գնահատելու լավագույն փորձի և միջազգային ստանդարտների հետ համապատասխանելիությունը, վերանայի առկա ՏՀՏ-ի էկոհամակարգի արձագանքը՝ ներառյալ վստահության հեռախոսային ծառայությունների հաղորդման մեխանիզմները և արդյունաբերական ներգրավվածությունը և տվյալ ոլորտում ներգրավված այլ շահառուների գործողությունների քարտեզը:
- Տեղեկացնել վերլուծության մասին, ներպետական մարմինների և այլ համապատասխան շահառուների և կազմակերպությունների կողմից ԵՍԾԲ վերաբերյալ համապատասխան տվյալները և տեղեկատվությունը հասանելի դարձնել ը լայն շրջանակներին: Ի հավելումն, առաջնային տվյալները պետք է հավաքագրել տարբեր աղբյուրներից, ինչպիսիք են՝ երեխաները, ծնողները, ուսուցիչները, իրավապահ մարմինները, ծառայություն մատուցողները:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Ամբողջ աշխարհում կառավարությունների և քաղաքացիական հասարակության ջանքերի համագործակցության շնորհիվ բազմաթիվ միջկառավարական և միջազգային հասարակական կազմակերպություններ կատարել են հետազոտություններ, վերլուծություններ և մշտադիտարկումներ ու մշակել են պետություններին օգնելու լավագույն փորձ: Այն ներառում է ՅՈՒՆԻՍԵՖ-ը և իր հետազոտությունների գրասենյակը (www.unicef.org/protection և www.unicef-irc.org), Վերացնել երեխայի մարմնավաճառությունը և թրաֆիքինգը (www.ecpat.net) և Ընտանեկան առցանց անվտանգության համակարգի համաշխարհային ռեսուրս և տեղեկատվական ուղեցույց (Family Online Safety Institute's Global Resource and Information Directory) (www.fosigrid .org): Մանրամասն տեղեկատվությունը հասանելի է նրանց կայքերում:
- ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը հրապարակել է Երեխաների բռնության վերաբերյալ մի ուսումնասիրություն, վերնագրված՝ Բացահայտել մանկական ներուժը և նվազեցնել ռիսկերը՝ ՏՀՏ, համացանց և բռնություն երեխաների նկատմամբ www.srsg.violenceagainstchildren.org կայքում:
- Global Kids Online միջազգային հետազոտական ծրագրի նպատակն է բացահայտել, թե ինչպե՞ս է համացանցը մեծացնում երեխաներին վնասելու ռիսկը: Այդ ամենը կատարվում է որպեսզի խթանի և ուղղորդի հետազոտություններն այն ուղղությամբ, թե ինչպես են երեխաներն մբողջ աշխարհում օգտագործում նոր թվային, ցանցային և բջջային հեռախոսների տեխնոլոգիաները: Մանրամասն տեղեկատվությունը հասանելի է նրանց www.unicef-irc .org/article/1194/ կայքում:

Կարողություն 3 – Օրենսդրություն

Սահմանում

- Անհրաժեշտ է մանրամասն մշակված և արդյունավետ ներպետական օրենսդրություն երեխաներին ցանկացած տեսակի սեռական շահագործումից և բռնությունից ինչպես առցանց, այնպես էլ ցանցից դուրս պաշտպանելու համար:
- Երեխաների դեմ սեռական հանցավոր գործողությունները պետք է քրեականացվեն; պետք է սահմանվի երաշխիք, որ իրավապահ մարմինները կկարողանան բացահայտել նման գործողություններ կատարողներին; պաշտպանել տուժողներին և երաշխավորել վերջիններիս իրավունքների պաշտպանությունը, ինչպես նաև ծառայություն մատուցողները հագեցած լինեն անհրաժեշտ սարքավորումներով, առցանց տեղադրված նյութի բովանդակությունը վերանայելու և հաղորդելու համար:
- Օրենսդրությունը կարող է կիրառել կամ որպես նմուշ ընդօրինակել գոյություն ունեցող միջազգային իրավունքը՝ ներառելով միջազգային չափանիշները և երեխայի պաշտպանության լավագույն միջոցները, որը հիմնված է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի և նրան կից Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրության վրա:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Հասկանալի և արդյունավետ օրենսդրության առկայությունն իրավապահ մարմիններին հնարավորություն կընձեռի արդյունավետ հետազոտել և քրեական պատասխանատվության ենթարկել երեխայի դեմ սեռական հանցագործություն կատարողներին, բացահայտել և պաշտպանել ավելի շատ զոհերի: Սա առավել կարևոր է առցանց հանցագործությունների համար, երբ առկա չէ որևէ իրեղեն ապացույց, որ սեռական բռնություններն իրականացվել են անմիջական շփմամբ և երաշխավորել, որ երեխայի նկատմամբ սեռական բոլոր հանցագործություններով կատարվելու է քրեական հետապնդում:
- ԵՍՇԲ հանցագործությունները կարող են հատել աշխարհագրական սահմանները, երբ հանցագործը գտնվում է մեկ երկրում, իսկ զոհը՝ մեկ այլ: Առցանց ԵՍՇԲ դեպքերում ծառայություն մատուցողները հաճախ բնակվում են մեկ այլ պետությունում: Հետևաբար, ԵՍՇԲ կանխարգելման և վերլուծման իրավական մոտեցումները պետք է համակարգվեն և հնարավորինս այնպես համալրվեն, որ կանխվեն երեխայի նկատմամբ սեռական հանցագործներն այն երկրներում, որտեղ հանցագործների կարծիքով երեխաներն առավել խոցելի են:
- Համացանցի դերը երեխայի սեռական չարաշահումների վերաբերյալ նյութերի դիտման կամ տարածման մեջ նշանակում է, որ երբեմն կապի տվյալները (այսինքն՝ «ո՞վ», «որտե՞ղ», «ե՞րբ», «ինչպե՞ս» և «ու՞մ հետ» է կապ հաստատել, բայց ոչ այն, ինչ է գրվել կամ ասվել), առցանց ԵՍՇԲ հանցագործներին բացահայտելու միակ միջոցն է: Երաշխիքները կարևոր են՝ ներառյալ ընտրված իշխանություններին տրված հաղորդակցության տվյալների լիազորությունների անկախ վերահսկումը: Լիազորությունների շրջանակում անհրաժեշտ է սահմանել, թե ինչու՞ է հաղորդակցական վիճելի տվյալների հասանելիությունը կարևոր կոնկրետ նախաքննության համար և որքանով է այն համահունչ նպատակին:

Լավագույն փորձը

- Ներկայումս մանրամասն կարգավորված օրենսդրություն չունեցող երկրների համար նախնական քայլ կլինի իրենց օրենսդրությունը միջազգային իրավական չափանիշներին համապատասխանեցնելը՝ ուղղված այդ խնդիրների լուծմանը, որից հետո հնարավոր կլինի աջակցել ամբողջական և արդյունավետ ազգային օրենսդրության մշակմանը:
- Եվրոպայի խորհրդի Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիան (Բուդապեշտի կոնվենցիա) և Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին կոնվենցիան (Լանզարոտեի կոնվենցիա) ծառայում են որպես քրեական իրավունքի բարեփոխումների և զոհերի լայն շրջանակի համար նախատեսված ծառայությունների ընդգրկուն բարեփոխումների ելակետ: Առկա են արդյունավետ գործիքներ ԵՍՇԲ դեմ պայքարելու համար և օգտակար ռեսուրսներ՝ տեղեկացնելու արդյունավետ օրենսդրական դաշտի ստեղծման մասին, քանի որ դրանք ներառում են հանցագործությունների յուրահատուկ սահմանումներ, ինչպես նաև դրույթներ համաձայն որի պատիժ է պահանջվում հանցավոր վարքագծի համար, թույլատրում է ավելի արդյունավետ պատժամիջոցներ կիրառել հանցագործների նկատմամբ և ծառայություններ մատուցել զոհերին: Լանզարոտեի կոնվենցիան նույնպես պարունակում է ուղեցույցներ և կանխարգելիչ միջոցներ, ինչպիսիք են՝ երեխաների հետ շփում ունեցող անձանց վերահսկումը, հավաքագրումը և վերապատրաստումը, ինչպես նաև հանցագործների և հավանական հանցագործների համար միջոցների մշտադիտարկումը: Խնդրում ենք նկատի ունենալ, որ Եվրոպայի խորհրդի կազմում չընդգրկված երկրները կարող են միանալ այս Կոնվենցիաներին:
- Համաձայնեցված չափանիշները հնարավորություն կտան վերահսկելու և հաղորդելու օրենսդրության կիրառման արդյունավետությունը: Արդյունավետության միջոցառումների մեջ պետք է ներառվեն նվազագույն կերպով՝ դատապարտյալների քանակը և հայտնաբերված զոհերի թիվը:
- Լյուքսեմբուրգյան ուղեցույցները (տես՝ Կարողություն 21) առաջարկում են գործնական ուղեցույցներ, թե ինչպես օրենսդրության մեջ կարելի է կիրառել ԵՍՇԲ տերմինների ամբողջական բառարան:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Համապատասխան միջազգային պայմանագրերի վերաբերյալ մանրամասն տես հետևյալ հղումներով՝ www.ohchr.org/en/ professionalinterest/pages/crc.aspxandwww.ohchr.org/en/ professionalinterest/pages/oPSCCRC.aspx
- Եվրոպայի խորհրդի՝ Բուդապեշտի և Լանզարոտեի կոնվենցիաները տես հետևյալ հղումով www .coe .int/en/web/conventions/full-list
- Լյուքսեմբուրգյան ուղեցույցների վերաբերյալ մանրամասն տես հետևյալ կայքում www.luxembourgguidelines.org
- ▪Կորած ու շահագործված երեխաների միջազգային կենտրոնը (ԿՇԵՄԿ) հետազոտում է ամբողջ աշխարհի ներպետական օրենսդրությունը՝ բացահայտելու լավագույն փորձը և օգտակար օրինակներ, որոնք կարող են օգտագործվել այլ պետությունների կողմից: ԿՇԵՄԿ-ի Մանկական պոռնոգրաֆիա. Մոդելային օրենսդրություն և համաշխարհային վերանայում գործիքը պետությունների համար սահմանում է օրենսդրական շրջանակը կիրառելու/բարելավելու հնարավորություն: Մանրամասն տեղեկատվության համար տես՝ Կորած ու շահագործված երեխաների միջազգային կենտրոնի կայքը՝ www.icmec.org
- Այլ միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Երեխայի մարմնավաճառությունը և թրաֆիքինգը վերացնելը (ECPAT) և ՅՈՒՆԻՍԵՖ-ը ձեռնարկել են հետազոտություններ, օրենսդրության վերլուծություններ և ԵՍՇԲ կանխարգելման և արձագանքման համար ռազմավարական ծրագիր: Մանրամասն տեղեկատվությունը հասանելի է – www.unicef.org/ protection և www.ecpat.net կայքերում:

Կարողություն 4– Նշանակված իրավապահ մարմին

Սահմանում

- Իրավապահ մարմինների կարողությունն է ղեկավարել, աջակցել և համակարգել ինչպես առցանց, այնպես էլ ցանցից դուրս ԵՍՇԲ դեպքերի վերաբերյալ քննությունը։▪ Դրա գլխավոր նպատակն է պաշտպանել հանրությանը և այն.
    - ընդունում է տեղեկատվություն՝ գործում է որպես մասնագիտացված կենտրոն, երբ ԵՍՇԲ վերաբերյալ ստանում է հաղորդակցություն՝ միջազգային իրավապահ մարմինների, հանրության, արդյունաբերության կողմից (ներառյալ՝ ԱՄՆ-ի ԿՇԵՄԿ) և հասարակական կազմակերպություններից (ներառյալ՝ թեժ գիծը):
    - մշակում է տեղեկատվություն՝ հաղորդած տեղեկատվությունը դարձնում գործածելի՝ քննություն նախաձեռնելու նպատակով:
    - հետախուզություն՝ քննության իրականացումը պետք է պաշտպանի ԵՍՇԲ զոհերին և ապահովի նրանց անվտանգությունը, ձերբակալի հանցագործներին:
- Իրավապահ մարմինների ծառայողները սույն կարողության սահմաններում պետք է զինված լինեն գիտելիքներով, փորձով, համակարգով, գործիքներով և միջոցներով, որոնք պահանջվում են, որպեսզի վերը նկարագրված գործառույթներն իրականացվեն և նպաստեն դրական դատական բարեփոխումներին:
- Գործածելով բազմաշահառու մոտեցումը, իրավապահ մարմինները հասկանում են երեխաների պաշտպանության աշխատուժի և հասարակական կազմակերպությունների դերը՝ ուժեղացնելու զոհերին տրամադրվող աջակցությունը ԵՍՇԲ վերաբերյալ կատարվող քննությունների ինչպես ընթացքում, այնպես էլ դրանցից հետո: Դրանք ներգրավում են երեխայի պաշտպանության մասնագետների՝ երաշխավորելու, որ իրենց աշխատանքը միշտ լինելու է զոհակենտրոն և Նշանակված իրավապահ մարմին նրանք ձեռնարկում են քննություն՝ օգտագործելով երեխայի պաշտպանության առաջատար սկզբունքները:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Մասնագիտացված կարողությունը կերաշխավորի, որ պետության իրավապահ մարմիններն ունակ կլինեն արդյունավետ արձագանքելու ԵՍՇԲ վերաբերյալ հաղորդումներին՝ ապահովելով քրեական հետապնդումների ավելացող վիճակագրություն, պաշտպանված զոհերի թվի աճ և հանցագործությունների թվի էական նվազեցում:
- Հանրությանը և երրորդ կողմերին վստահություն կներշնչի ԵՍՇԲ դեպքերի մասին հաղորդելու՝ հասկանալով, որ իրենց հաղորդումների հիման վրա կձեռնարկվեն համապատասխան միջոցներ և զոհերին կցուցաբերվի աջակցություն ինչպես քննության ընթացքում, այնպես էլ դրանից հետո:
- Անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ, համակարգեր և գործիքներ ունեցող իրավապահ մարմինների աշխատակիցների հետ երկիրը կկարողանա ղեկավարել ու համակարգել ԵՍՇԲ վերաբերյալ բարդագույն քննությունները և անդրսահմանային արարքների դեպքում արդյունավետորեն համագործակցել միջազգային իրավապահ մարմինների հետ՝ առաջընթաց ապահովելու համար:
- Ներպետական իրավապահ մարմիններից միայն մեկ կոնտակտային մարմին ունենալը կերաշխավորի, որ հանրության և երրորդ կողմերի կողմից ԵՍՇԲ բոլոր հաղորդումները կարձանագրվեն, կգնահատվեն ռիսկերը և կփորձարկվեն՝ հետևողական, համակարգված, համապատասխան և արդյունավետ կերպով:

Լավագույն փորձը

- Այն պետությունները, որոնք ներկայիս չունեն ԵՍՇԲ դեպքերին առնչվող մասնագիտացված իրավապահ համակարգեր, ազգային իրավապահ համակարգը պետք է բացահայտի և իրագործի այս կարողության կազմակերպումը, որը ներառում է՝ մասնագիտացված պաշտոնյաների բացահայտում, ովքեր պաշտոնը կստանձնեն որոշակի նվազագույն ժամանակահատվածով (առաջարկվում է երկու տարի), այսպիսի միջոցները տեղավորելու համար համապատասխան տարածքի հատկացում, Նշանակված իրավապահ մարմին համապատասխան սարքավորումների ձեռքբերում, ԵՍՇԲ վերաբերյալ վերապատրաստման և հմտությունների ապահովում, պաշտոնյաներին հոգեբանական և ֆիզիկական առողջության աջակցության ցուցաբերում և ԵՍՇԲ վերաբերյալ իմացության վերապատրաստման ստեղծում և տրամադրում տեղական իրավապահ մարմինների համար՝ պետության ողջ տարածքով: Այն պետությունների համար, որոնք արդեն ունեն ԵՍՇԲ մասնագիտացված իրավապահ համակարգերի կարողություն, սակայն դեռևս կարիք ունեք զարգացնելու բազմաշահառու մոտեցումը, ապա առաջին մեծ քայլը կլինի երեխաների պաշտպանության մասնագիտացված մասնագետների ներգրավումը քննության մարմինների հետ աշխատելու նպատակով: ԵՍՇԲ դեպքերի քննության պլանավորման և անցկացման ողջ ընթացքում իրավապահ մարմինները պետք է հետևեն երեխաների պաշտպանության առաջատար պրակտիկայի սկզբունքներին, որը կհանդիսանա երեխաների կարիքների և իրավունքների մշտական առաջնայնության երաշխիք: Բազմաշահառու մոտեցումը կերաշխավորի զոհի պաշտպանության և աջակցության բարձր մակարդակ և կօգնի զոհից ստանալու լավագույն ապացույցները՝ բարձրացնելով քրեական հետապնդման արդյունավետությունը: Ցանկալի է նաև տարածաշրջանում լավագույն պրակտիկայի տարածումը:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Ամբողջ աշխարհում գոյություն ունեն մի շարք իրավապահ մարմիններ, որոնք ԵՍՇԲ կարողությունների ստեղծման և իրականացման փորձ ունեն՝ օգտագործելով վերը նշված բազմաշահառու մոտեցումը: Այս գործակալություններից խորհրդատվություն և աջակցություն կարող են կատարվել Ինտերպոլ (www.interpol.int) կայքի միջոցով, որը երկկողմանի կապ կհաստատի երկրի և համապատասխան գործընկեր իրավապահ մարմինների միջև:

Կարողություն 5 – Դատական իշխանություն և դատախազություն

Սահմանումը

- Դատական իշխանությունը և դատախազությունը զինված են մասնագիտական գիտելիքներով և հմտություններով, որոնք անհրաժեշտ են ԵՍԾԲ զոհերի մասնակցությամբ դատական դրական արդյունքներ ստանալու համարի:
- Դատական գործընթացում տուժողների կարիքները պետք է գերակա լինեն՝ ցուցաբերելով ողջ գործընթացի ընթացքում համապատասխան աջակցություն:
- Դատական իշխանությունը և դատախազությունը, որոնք առնչվում են ԵՍԾԲ գործերի հետ հասկանում են, թե ինչ հանգամանքներում կարող են պատահել ԵՍԾԲ գործերը, հստակ պատկերացնում են տուժողների/վկաների հնարավոր խոցելիությունը, ինչպես նաև մեթոդաբանության և հանցագործների նկարագրի մասին:
- Տուժողներին և վկաներին ցուցաբերվում է հուզական և հոգեբանական աջակցություն:
- Դատական իշխանությունը պատկերացում ունի այն ռիսկերի մասին, որոնք կարող են առաջանալ երեխաների մոտ սեռական հանցագործների արարքներից, ինչպես նաև հանցագործության ծանրության ու համապատասխան պատժի մասին, ինչը սահմանված է ներպետական օրենսդրությամբ:

Ինչու է՞ այն անհրաժեշտ

- Այն երեխաները և դեռահասները, որոնք ենթարկվել են սեռական բռնության և/կամ շահագործման, դատական գործընթացում ունեն ծավալուն աջակցության կարիք, որպեսզի արդյունավետորեն ապահովվի դատաքննության մասնակցությունը և նրանց ներգրավվածությունը ողջ ընթացքում:
- Դատաքննության ընթացքում տուժողները պետք է պաշտպանված լինեն ցանկացած բացասական կամ երկարաժամկետ հուզական և հոգեբանական վնասից:
- Գիտելիքներով և համապատասխան հմտություններով զինված դատավորները և դատախազները կարող են երաշխավորել, որ ցանկացած ոք, ով ներգրավված է դատական գործընթացում, ամբողջովին գիտակցում է այն գործոնները, որոնք կարող են բացասաբար ազդել ԵՍԾԲ գործերի վրա և նվազեցնել դրանք դատաքննության ողջ ընթացքում:
- Արդյունավետ հետապնդումները կուժեղացնեն հանրության և տուժողների վստահությունը դատաքննության նկատմամբ, ինչը կխթանի ԵՍԾԲ դեպքերի մասին հանրության ավելի լայն շրջանակների կողմից իրավապահ մարմիններին հաղորդելուն, որն էլ իր հերթին կհանդիսանա զսպող գործոն հանցագործների համար:

Լավագույն փորձը

- Տուժողների արդյունավետ աջակցությունը, որը չի խանգարում երկրի պատշաճ իրավական գործընթացին, պետք է զարգացվի և համալրվի մասնագիտացված գիտելիքներով և հմտություններով: Այն Այն կարող է տրամադրվի իրավաբանական և ոչ իրավաբանական անձանց կողմից:
- Դատական իշխանությունը կամ դատախազությունը պետք է հասկանա և հաշվի առնի այն գործոնները, որոնք կարող են ազդել երեխայի կամ երիտասարդի վստահելիության կամ հուսալիության վրա, ինչը կբացառի դատավարության վրա բացասական ազդեցությունը: Օրինակ, զոհերի անհամատեղելի տվյալները և քրեական արդարադատության գործընթացին մասնակցելու դժկամությունը:
- Հատուկ միջոցներ պետք է կիրառվեն մինչ դատավարությունը, դատավարության ընթացքում և դատավարությունից հետո՝ երաշխավորելու, որ ամբողջ վարույթի ընթացքում տուժողները ստանում են աջակցություն: Օրինակ՝
    - Տուժողներին վարույթի մասին իրազեկելն իր տարիքին համապատասխան լեզվով
    - Անհրաժեշտության և հնարավորության դեպքում ներգրավել ծնողներին կամ խնամակալներին
    - Ցուցմունք տալու համար թույլատրել օգտագործել ոչ ստանդարտ մեթոդներ, ինչպիսիք են՝ տեսակապի միջոցով հարցաքննությունները:
- Դատախազները պետք է տեղյակ լինեն հասանելի աջակցության տեսակների և մասշտաբի մասին և անհրաժեշտության դեպքում այդ աջակցության մասին հայտնեն երեխային կամ երիտասարդին (կամ նրանց ծնողին/խնամակալին/խնամողին):
- Հոգեբանական կամ առողջական աջակցություն պետք է ցուցաբերվի նաև ԵՍԾԲ գործերում ներգրավված դատական ծառայողներին:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Պետք է հետևել, որ բոլոր երիտասարդ տուժողները կամ վկաները ստանան պատշաճ բուժում: ՄԱԿ-ը հրապարակել է Հանցագործության տուժող և վկա երեխաների գործերով արդարադատության ուղեցույց (www.unodc.org).

Ներպետական ուղեցույցի օրինակելի տարբերակը հասանելի է հետևյալ հղումով www.cps.gov.uk/publications/docs/best_evidence_in_criminal_proceedings.pdf.

Կարողություն 6 – Հանցագործի կառավարման գործընթաց

Սահմանում

- Անհրաժեշտ է ստեղծել երեխայի նկատմամբ սեռական հանցագործություն կատարածներին կառավարելու և վերականգնելու բազմաբնույթ համակարգ՝ կանխարգելելու նրանց կողմից կրկնահանցագործության կատարումը՝ առցանց և ցանցից դուրս պայմաններում:Համակարգն ընդգրկում է՝
    - Ձերբակալվածի կամ դատապարտյալի ուղղակի վերահսկում
    - Կալանավայրից կամ բանտից ազատվելուց հետո համայնքում հանցագործների կառավարում
    - Ներպետական և միջազգային մակարդակով հանցագործներին վերաբերող հետախուզության շարունակական հավաքագրում, վերլուծություն և փոխանակում:
- Անհրաժեշտ է ստեղծել սեռական հանցագործների ներպետական ռեգիստր (ինչպես սահմանված է ներպետական օրենսդրությամբ)՝ անձի կատարած հանցագործությունները գրանցելու համար: Այս տվյալները կարող են փոխանցվել համապատասխան գործակալություններին, ինչը կօգնի գնահատել ռիսկերը, որոնք կարող են առաջանալ համայնքում:
- Ստեղծել իրավական գործիքներ (օրինակ, դատական կարգադրություններ) հանցագործներին համայնքում կառավարելու համար: Այս ամենը թույլ կտա հանցագործի նկատմամբ կիրառել հատուկ պայմաններ կամ արգելքներ՝ելնելով գործի բնույթից:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Երեխայի նկատմամբ սեռական բռնություն կատարած հանցագործներին կառավարելու և վերականգնելու համակարգը կսահմանափակի նրանց հնարավորությունները երեխային հետագայում վնաս պատճառելուց:
- Այն իշխանություններին տրամադրում է մի թափանցիկ և կայուն գործիք, որի միջոցով վերջիններս կարող են կառավարել բոլոր ռիսկերը, որոնք կառաջացնեն երեխայի դեմ սեռական բռնություն կատարած հանցագործները:
- Այն ապահովում է մի մեխանիզմ, որը թույլ կտա արտերկրում գտնվող երեխաներին պաշտպանել այն վտանգներից, որոնք կարող են առաջանալ երեխայի դեմ բռնություն կատարած միջազգային հանցագործներից:
- Սեռական հանցագործների ազգային ռեգիստրը թույլ կտա բոլոր լիազորված անձանց հեշտությամբ ստանալ համապատասխան ճշգրիտ և արդիական տեղեկատվություն: Դա նպաստելու է իրավապահ մարմիններին և այլ համապատասխան կազմակերպություններին արդյունավետ վերահսկել հանցագործների գործողությունները և արդյունավետ ու անվտանգ փոխանակել տեղեկատվությունը :

Լավագույն փորձը

- Ուղղակի վերահսկողություն, երբ հանցագործը ձերբակալված է կամ դատապարտված.
  - Հանցանքները գրանցվում և ներբեռնվում են ազգային կենտրոնական տվյալների բազայում
  - Հետախուզությունը հանձնարարվում է համապատասխան մարմիններին
  - Գտնվելով կալանքի տակ հանցագործները մասնակցում են վերականգնողական և կրթական ծրագրերին:
- Հանցագործներին ազատելուց հետո կառավարումը.
  - Բազմամասնագիտական մոտեցում է ձեռնարկվում համայնքում հանցագործներին կառավարելու համար՝ առաջնահերթություն տալով նրանց, ովքեր իրենցից ներկայացնում են կրկնահանցանք կատարելու առավել վտանգ:
  - Հետախուզական տվյալների բազաները, որոնք պարունակում են հանցագործին առնչվող ամբողջական տեղեկատվություն, ինչպես նաև վերջինիս կողմից ներկայացվող ռիսկերը, պետք է հասանելի լինեն: Տվյալները պետք է պարբերաբար թարմացվեն և մատչելի լինեն բոլոր համապատասխան մարմինների համար՝ մշտադիտարկման, ռիսկի գնահատման և ցանկացած հանցագործի ազատման պայմանները վիճարկելու համար:
  - Մարմինները՝ մասնավորապես իրավապահ մարմինները և սոցիալական ծառայությունները հանցագործներին կառավարման նպատակով համագործակցում են միմյանց հետ և տրամադրում համապատասխան տվյալներ: Սա ներառում է միջազգային իրավապահ մարմիններին տեղեկություններ տրամադրելը, օրինակ, երբ հանցագործը փորձում է դուրս գալ այդ պետության իրավասության սահմաններից:
  - Ենթադրվում է, որ ազատման պայմանները պետք է բացառեն ցանկացած ռիսկեր առ այն, որ հանցագործը կարող է վտանգ ներկայացնել երեխաների համար, ինչպիսիք են՝ թույլ չտալ, որ նրանք աշխատեն երեխաների հետ կամ սահմանափակվի նրանց շփումը կամ շփման մատչելիությունը երեխաների հետ, ինչպես նաև սահմանափակել հանցագործների տեղաշարժը:
  - Ծանուցման պահանջների և դատական հրահանգների համակարգն իրավապահ մարմիններին տրամադրում է տեղեկատվություն և լիազորություններ, որոնք անհրաժեշտ են համայնքում երեխաների դեմ սեռական բռնություն կատարած հանցագործներից պաշտպանելու համար:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Միացյալ Թագավորության հանցագործության կառավարման ազգային ծառայությունը հրապարակել է համայնքում սեռական հանցագործների կառավարման ժամանակակից մոտեցումների մասին եզրակացություն, որտեղ ներկայացրել է ռիսկերը և դրանց գնահատումը, https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/308159/ sex-offender-management-and-dynamic-risk.pdf
- ԱՄՆ-ի Սեռական հանցագործությունների կառավարման կենտրոնի կայքն ունի բազմաթիվ տեղեկություններ կապված Սեռական հանցագործությունների կառավարման վերաբերյալ: Տես http:/www.csom.org/ կայքը:

Կարողություն 7 – Նկարների բազայի հասանելիություն

Սահմանում

- Իրավապահ մարմիններն օգտագործում են Ինտերպոլի Երեխաների սեռական շահագործման միջազգային տվյալների ցանցը (ICSE DB), որպեսզի բարելավեն տուժողներին ու հանցագործներին հայտնաբերելու արդյունավետությունը:
- Անհրաժեշտության դեպքում երեխաների սեռական բռնության նկարների ազգային տվյալները պետք է հասանելի լինեն, և իրավապահ մարմինները կարող են դրանք օգտագործել տուժողներին ու հանցագործներին արդյունավետորեն հայտնաբերելու համար:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Երեխաների սեռական բռնության նյութերի առցանց փոխանակումը բազմաֆունկիոնալ է: Այս ամենի արդյունքում իրավապահ մարմինները պարտավորվել են համագործակցել ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային մակարդակներում՝ միմյանց հետ փոխանակելով տեղեկատվությունը և հետախուզության տվյալները:
- Նկարների բազայի մատչելիությունը ներպետական և միջազգային մակարդակներով նվազեցնում է իրավապահ մարմինների կողմից երեխաների սեռական բռնության նյութերի կրկնակի և կրկնվող քննության իրականացնելու ռիսկը, երբ զոհն արդեն հայտնաբերվել է կամ մեկ այլ իրավապահ մարմնի կողմից արդեն իրականացվում է քննություն:
- Երեխաների բռնության նկարների ազգային բազան ուժեղացնում է պետության ներսում իրավապահ մարմինների գործնական կարողությունը, քանի որ այն հնարավորություն է տալիս ծառայողներին օգտագործելու բազայում առկա նկարները՝ օգնելով զոհի և հանցագործի բացահայտմանը:
- Ինտերպոլի երեխաների սեռական շահագործման միջազգային և ազգային տվյալների բազայի բովանդակությունը կարող է ժամանակի ընթացքում զարգանալ՝ ներառելով տեսանյութեր, Ինտերպոլի երեխաների սեռական շահագործման հերթական համարներ և Ինտերպոլի նույնականացման տվյալներ, որոնք ավելի կբարելավեն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավապահ մարմինների գործառնական կարողությունները և համագործակցությունը:
- Ինտերպոլի Երեխաների սեռական շահագործման միջազգային տվյալներ օգտագործողները տրամադրում են բացառիկ ազգային գիտելիքներ՝ բացահայտելու հանցագործության կատարման երկիրը ն հանցագործի գտնվելու վայրը, որը կարող է հետագայում բարելավել զոհի և հանցագործի բացահայտման հնարավորությունները:

Լավագույն փորձը

- Ինտերպոլի Երեխաների սեռական շահագործման միջազգային տվյալները հետախուզության և նախաքննության գործիք է, որը հնարավորություն է ընձեռում վերբեռնել և վերլուծել իրավապահ մարմինների կողմից տրամադրված և երեխաների սեռական շահագործմանը վերաբերող նյութերի համաշխարհային տվյալները: Ինտերպոլի Երեխաների սեռական շահագործման միջազգային տվյալներին կարելի է մուտք ունենալ Ինտերպոլի համաշխարհային ապահով ցանցի միջոցով (I-24/7), որը միավորում է Ինտերպոլի ներպետական կենտրոնական բյուրոները և իր 190 անդամ պետությունները համար:

- Ինտերպոլի Երեխաների սեռական շահագործման միջազգային տվյալներին միանալու համար պետք է համապատասխանել մի շարք պայմաններին, մասնավորապես՝ ԵՍԾԲ դեպքերով իրավապահ մարմինների մասնագիտացված անձնակազմ (տես՝ Կարողություն 4) և գործող օրենսդրություն առկայություն, որով քրեականացված է երեխայի սեռական բռնության նյութերն արտադրել, պահելը և/կամ տարածելը՝ սահմանելով պատիժներ (տես Կարողություն 3):
- Երեխաների սեռական բռնությանը վերաբերվող նյութեր տարածելու և պահելու հետ միասին ազգային տվյալների բազայի առկայության համար հիմնական պահանջ է հանդիսանում համապատասխան գործող օրենսդրությունը:
- Ինտերպոլի Երեխաների սեռական շահագործման միջազգային տվյալների և ազգային տվյալների բազայի օգտագործման վերաբերյալ դասընթացներ պետք է կազմակերպվեն բոլոր այն ծառայողների համար, ովքեր ունեն այդ տվյալների հասանելիություն: Սա ներառում է նկարների դասակարգման, տվյալների բազաների գործունակության ստեղծման և զոհերին բացահայտելու վերաբերյալ ուսուցում:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Ինտերպոլի Երեխաների սեռական շահագործման միջազգային տվյալներին միանալու մասին տես հետևյալ հղմամբ www.interpol.int: Ներպետական տվյալների բազայի ստեղծման լավագույն փորձը կարող է տրամադրել մի շարք պետությունների կողմից, որոնք մշակել և ներդրել են իրենց սեփական տարբերակները: Այս պետություններից խորհուրդ և ուղեցույց կարելի է ստանալ Ինտերպոլի միջոցով:

Կարողություն 8 – Համալիր աջակցություն

Սահմանում

- ԵՍՇԲ զոհերին պետք է տրամադրել կազմակերպված և ամբողջական համալիր աջակցություն, որպեսզի նրանք կարողական հաղթահարել բռնության անմիջական ազդեցության հետևանքները և վերականգնվեն վերապրած վնասից:
- Զոհին հայտնաբերելու պահից նրան պետք է անմիջապես տեղեկացնել աջակցության ծրագրերի և գնահատված ռիսկերի մասին:
- Ամբողջական միասնական և անհատական աջակցության համալիր ծրագիրը պետք է զոհին տրամադրվի թե նախաքննության և դատաքննության ընթացքում, թե դրանից հետո:
- Օգնությունը ստանալու ավարտին տուժողները պետք է լինեն ինքնուրույն՝ կախված չլինելով կողմնակի աջակցությունից:
- Աջակցությունը տրամադրում են վերապատրաստված և փորձառու մասնագետները:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- ԵՍՇԲ տուժողները չեն ինքնանույնացվում և բացառում են զոհ լինելը՝ մերժելով այդ կարգավիճակը: Նրանք խոցելի են հարկադրանքի, համոզելու, հասակակիցների կողմից ճնշումների և վստահության չարաշահման դեպքերում իրենց նկատմամբ հանցանք կատարողների կողմից և այդ իսկ պատճառով նրանց պետք է նախաքննության, դատաքննության ողջ ընթացքում ապահովել աջակցությամբ, ինչը թույլ կտա վերջիններիս համագործակցել:
- Հաճախ զոհերն իրենց մեկուսացած են զգում անգամ ամենամտերիմներից և երկարատև ու մասնագիտական աջակցություն է պահանջվում, որպեսզի նրանք հասկանան, որ հանցավոր վարքը, որին իրենք ենթարկվել են, նորմալ չէ և հանգեցնում է դաժան հանցագործության կատարմանը, ինչն օգնում է ապացույցներ հավաքման պրոցեսին:
- Հաճախ զոհերը դառնում են առավել խոցելի և հակված դեպրեսիայի, մեկուսացվածությունից ինքնավնասման կամ ինքնասպանություն գործելուն, հետևաբար վերջիններս կարիք ունեն մասնագիտական աջակցման:
- Երկարատև աջակցությունը կարևոր է, քանի որ հոգեբանական խնդիրները կարող են հաճախ շարունակվել՝ հանցագործությունից տարիներ անց՝ հետևանքներ թողնելով զոհի կյանքում:

Լավագույն փորձը

- Երեխաների պաշտպանության միջազգային չափանիշները ստեղծված են տեղեկացնելու և զոհերի հետ նախաքննության և դատաքննության ընթացքում աշխատանքը դյուրինացնելու հետևյալ կերպ.
    - Խոցելի երեխաներից լավագույն ցուցմունք ստանալու հնարավորություն ընձեռելով
    - Բարելավել նրանց բարօրությունը և բարեկեցությունը, այլ ոչ թե վնասել այն
    - Կառավարել և նվազեցնել տուժողներին հասցված ռիսկը
    - Երաշխավորել, որ զոհերին կցուցաբերվի աջակցություն և անվտանգություն՝ անկախ նախաքննությանը կամ դատաքննությանը նրանց մասնակցելու ցանկությունից:
- Պետք է ի նկատի ունենալ երեխաների ապաքինումը և վերականգնումն առավել լայն շրջանակի նկատմամբ կիրառելու հնարավորությունը և անհրաժեշտության դեպքում տրամադրել շարունակական աջակցություն և վերաբնակեցում:

- Առողջապահության ոլորտի համապատասխան արձագանքը կարևոր է զոհերի համար, քանի որ այն առաջին օղակն է, որը հայտնաբերում է ԵՍՇԲ դեպքերը և փոխանցում դրանք իրավապահ և այլ աջակցման մարմիններին:
- Մշակութային ցանկացած խոչընդոտներ պետք է բարձրաձայնվեն դեպքերը և մասնագետները վերաբերմունքը պետք է լինի ոչ թե մեղադրող կամ դատապարտող է, այլ պաշտպանող: Զոհի անհատական խնամքի պլանավորումը պետք է բխի երեխայի անհատական կարիքներից և տրամադրվի հատուկ վերապատրաստված անձանց կողմից:
- Համալիր աջակցության ծրագիրը սկսվում է զոհի հետ առաջին հանդիպումից և պետք է իրականցվի հմուտ մասնագետի կողմից ամբողջ ընթացքում:
- Համապատասխան այն գործակալությունների կամ հասարակական կազմակերպությունների, որոնց պարտականությունն է երեխային խնամք ցուցաբերելը և հոգ տանելը, և իրավապահ մարմինների սերտ համագործակցությունը հիմք է հանդիսանում համարժեք արձագանքել՝ներառելով երեխաների իրավունքների պաշտպանության համատեքստում: Այս համագործակցությունը կօգնի փոխանակել տեղեկատվություն , ինչպես նաև հնարավորություն կընձեռի տրամադրել մասնագիտական խնամք և զարգացնել համալիր աջակցությունը: Մասնագիտական աջակցության ծառայությունները ներառում էին բժշկական աջակցություն , արտակարգ իրավիճակների ծառայություններ, ֆինանսական աջակցություն, կրթություն, թերապևտիկ խնամք և հնարավոր երկարաժամկետ աջակցություն այլ վայր տեղափոխվելիս: Աջակցության ծրագիրն ի սկզբանե պետք է հաշվի առնի և ուսումնասիրի այս ծառայությունների հասանելիությունը:

Առավել շատ ուղեցույցներ և աջակցություն

- ՅՈՒՆԻՍԵՖ-ն աշխատում է աշխարհի բոլոր կազմակերպությունների հետ՝ ստեղծելով հնարավորություններ և կարողություններ, ինչպես նաև աջակցություն ցուցաբերելով զոհին: Մանրամասն տես հետևյալ հղումով. www.unicef.org/protection.

Կարողություն 9 – Երեխայի պաշտպանության մասնագետներ/ աշխատակազմ

Սահմանում

- Երեխայի պաշտպանության մասնագետների փորձառու, մասնագիտացված անձնակազմ է անհրաժեշտ, որը վերապատրաստվել է համագործակցության համար բաց է և պատրաստ է աջակցել ԵՍԾԲ զոհերին:
- Սոցիալական ծառայության աշխատողներն անցնում են վերապատրաստման դասընթացներ՝ սովորելու, թե ինչպես օգնել երեխաներին իրավապահ մարմինների կողմից կատարվող նախաքննության ընթացքում, ինչպես նաև գնահատել նրանց կարիքները և նախաքննության ընթացքում առաջացող ցանկացած ռիսկերը:
- ԵՍԾԲ գործերի նախաքննությունը կատարվում է համաձայն ֆորմալ աշխատանքային ընթացակարգի, որն ընդհանուր է բոլոր համապատասխան շահառուների համար, ինչպիսիք են՝ իրավապահ մարմինները, սոցիալական/ երեխաների և առողջապահության ծառայությունները, և որտեղ հստակ բաշխված են դերերը և պարտականությունները:
- Սոցիալական ծառայողները սերտորեն համագործակցում են բոլոր այն կազմակերպությունների (օրինակ՝ դպրոցներ, հիվանդանոցներ և երիտասարդական կենտրոններ) հետ, որտեղ հնարավոր է հայտնաբերվեն երեխաների նկատմամբ բռնության դեպքեր, որտեղ երեխաներն են կիրառել բռնություն, և անվտանգության խորհուրդներ տալ այդ վերջիններիս:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Սոցալական աշխատողների համար մասնագիտացված վերապատրաստումը երաշխավորում է, որ նրանք կկարողանան ԵՍԾԲ զոհերին ժամանակին տրամադրեն համապատասխան աջակցություն՝ վնասը նվազեցնելու համար, օգնություն տրամադրել ցանկացած նախաքննության և հետախուզման ընթացքում, ինչպես նաև օգնել վերականգնմանը:
- Սոցիալական ծառայողների/ երեխաների ծառայությունների և իրավապահ մարմինների արդյունավետ համատեղ աշխատանքը նշանակում է, որ ցանկացած նախաքննության ընթացքում առաջնահերթություն է տրվում զոհի կարիքներին և իրավունքներին, որն էլ վերջն ի վերջո նպաստում է նրանց վերականգնմանը:
- Վերապատրաստված աշխատակազմը պետք է համապատասխանի մասնագիտական չափանիշներին (միջազգային ստանդարտները կիրառելի են, եթե գոյություն չունեն ներպետական չափանիշներ), ինչն էլ իր հերթին երաշխավորում է ծառայությունների կայուն և բարձր որակ ՝ անկախ զոհերի գտնվելու վայրից:
- Երեխաների պաշտպանությամբ զբաղվող իրավաբանական ծառայությունները պետք է լինեն հաշվետու և թափանցիկ՝ ամենաբարձր չափանիշներին համապատասխանելու և հանրությանը մատուցվող ծառայության մասին տեղեկացնելու համար, :

Լավագույն փորձը

- նախաքննություն իրականացնող իրավապահ մարմինների աշխատանքներում կերաշխավորի, որպեսզի երեխաների պաշտպանության ռազմավարությունը բխի զոհերի կարիքներից և իրավունքներից:
- Սոցիալական ծառայողների համար վերապատրաստումները պետք է անցկացնեն ԵՍԾԲ հարցերով վերապատրաստված մասնագետների կողմից, ինչը թույլ կտա բոլոր սոցիալական աշխատողներին ճիշտ հասկանալ հանցագործությունը:

- Սոցիալական աշխատողները/ երեխաների ծառայությունները պետք է ստանձնեն պատասխանատվություն և համակարգեն ծառայություն մատուցող տարբեր մարմինների կողմից աջակցության տրամադրումը:
- ԵՍԾԲ զոհերի հետ աշխատող և ԵՍԾԲ նախաքննություն իրականացնող անձնակազմին հնարավորություն է տրվում օգտվել բոլոր ծառայություններից՝ իրենց բարեկեցությունն ապահովելու համար:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Սոցիալական աշխատողների միջազգային ֆեդերացիան համաշխարհային կազմակերպություն է, որը տարածում է լավագույն փորձի մոդելները և նպաստում է միջազգային համագործակցությանը: Այն ունի 116 անդամ պետություն և առավել մանրամասն տեղեկատվություն և ուղեցույց կարելի է գտնել www.ifsw.org կայքում: Լրացուցիչ տեղեկությունները հասանելի են նաև Համաշխարհային սոցիալական ծառայություն աշխատուժի դաշինքում (www.socialserviceworkforce.org), որն ունի մի շարք ռեսուրսներ, ներառյալ՝ համատեղ մասնագիտական ծառայություններ և Մարի Կոլլինսի հիմնադրամ (www.mariecollinsfoundation.org.uk)

Կարողություն 10 – Փոխհատուցում, հատուցում և բողոքարկման մեխանիզմներ

Սահմանում

- ԵՍՇԲ զոհերին և նրանց խնամակալներին/խնամողներին արդյունավետ փոխհատուցման և հատուցման տրամադրումը ներառում է.
    - ԵՍՇԲ զոհերի վերականգնողական ծառայություններ, ներառյալ՝ բժշկական, հոգեբանական, սոցիալական խնամքի, իրավաբանական, բնակարանային, կրթական/վերապատրաստման ծառայություններ
    - Հասանելի, արդար և թափանցիկ փոխհատուցման մեխանիզմ
    - Հասանելի փաստաբանական ծառայություններ, ներառյալ՝ աջակցություն ինքնուրույն պաշտպանությանը
    - Անհատական բողոքների ընթացակարգ
- Պետք է ապահովվել ընթացակարգեր, որպեսզի երաշխավորվի, որ ԵՍՇԲ զոհերը ստանան հասանելի ծառայություններից օգտվելու լավագույն հնարավորություն: Սա ներառում է երեխային վերաբերվող ծառայությունների մասին տեղեկատվություն և խորհրդ տրամադրելը:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Հաճախ ԵՍՇԲ զոհերն իրենց չեն ճանաչում որպես զոհ, սոցիալական խարանի, անձնական կամ ընտանեկան ամոթի կամ վախի պատճառով և հետևաբար չեն բարձրաձայնում/հանրայնացնում իրեն պատճառված տրավմայի մասին:
- Հաճախ այն անձինք, ովքեր պատասխանատու են ԵՍՇԲ զոհերի համար, բարձրաձայնում են դեպքի մասին զոհի նկատմամբ ուժ գործադրելով կամ նրան վերահսկելով՝ այդ անհավասարությունը շտկելու համար զոհերին տրամադրելով համապատասխան իրավական հատուցում և հանրային վերականգնում:

Լավագույն փորձը

- Ծառայությունների մատուցումը և ընթացակարգերը միջազգային իրավունքով հաստատված պարտականություններ են՝ ամրագրված մարդու հիմնարար իրավունքների վերաբերող միջազգային պայմանագրերում, միջազգային չափանիշներում և մարդու իրավունքների տարածաշրջանային մեխանիզմներում:
- Ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ ծառայությունները պետք է հասանելի լինեն: Մասնավորապես, հոգեբանական կամ թերապևտիկ աջակցությունը պետք է մատուցվի և մանկահասակության փուլում և դրանից հետո, քանի որ ԵՍՇԲ հետևանքները կարող են շարունակվել նաև չափահաս տարիներին:
- Ծառայությունները պետք է հաշվի առնեն սեռը, տարիքը, հասունության աստիճանը և երեխայի իրավունքներն ու կարիքները՝ խուսափելով ոչ անհրաժեշտ գործընթացներից և հարցազրույցներից, որպեսզի կանխեն հետագա վնասը և աջակցեն ֆիզիկական ու հոգեբանական վերականգնմանը, ինչպես նաև զոհերի սոցիալական վերաինտեգրմանը:
- Այն երեխաները, ովքեր ենթարկվել են սեռական բռնության և/կամ շահագործման, հատկապես աղջիկները, ովքեր հղիացել են կամ երեխաները, ովքեր ապրում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով կամ սեռավարակներով, որոնք փոխանցվել են բռնության արդյունքում, պետք է ստանան տարիքին համապատասխան բժշկական խորհրդատվություն, ինչպես նաև անհրաժեշտ ֆիզիկական կամ հոգեբանական խնամք և աջակցություն:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Տեղեկատվությունը հասանելի է ՄԱԿ-ի Հանցագործության տուժող կամ վկա երեխաների գործերի վերաբերյալ արդարադատության մասին ուղեցույցներում (*Guidelines on Justice in Matters involving Child Victims and Witnesses of Crime*): Հավելյալ տեղեկատվությունը հասանելի է ՄԱԿ-ի Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության ոլորտում երեխաների նկատմամբ բռնության վերացման մասին տիպային ռազմավարության և գործառնական միջոցներում Ա/Գ.3/69/Լ.5, Մաս V (*Model Strategies and Practical Measures on the Elimination of Violence against Children in the Field of Crime Prevention and Criminal Justice, A/C.3/69/L.5, Part V*) – Բռնության ենթարկված երեխա-զոհերի արդյունավետ աջակցություն առաջարկելու և Երեխաների նկատմամբ բռնության դեպքում խորհրդատվություն, բողոքարկում և հաղորդում տրամադրող անվտանգ և երեխայամետ ՄԱԿ-ի մեխանիզմներ ը (*Offering effective protection to child victims of violence and the UN's Safe and Child-Sensitive Counselling, Complaint and Reporting Mechanisms to Address Violence Against Children*) www.srsg.violenceagainstchildren.org/page/849
- Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի երրորդ կամընտիր արձանագրությունը հաղորդման ընթացակարգի մասին սահմանում է երեխաների իրավունքների խախտման միջազգային բողոքարկման ընթացակարգ (The Third Optional Protocol to the UNCRC on a Communications Procedure sets out an international complaints procedure for child rights violations) – www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/OPICCRC.aspx

Կարողություն 11 – Երեխայի համար վստահության հեռախոսային ծառայություններ

Սահմանում

- Երեխաների և երիտասարդների համար աջակցության և միջամտության ծառայություն, որը հատկացվում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կամ կառավարության կողմից:
- Մատուցվող ծառայությունները կարող են տրամադրվել սկսած այն պահից, երբ օգնություն է հատկացվում այն երեխային կամ դեռահասին, ով վստահ չէ բռնության մասին հաղորդում տալու մեջ, մինչև անմիջական օգնություն ցուցաբերելը՝ վտանգավոր իրավիճակից երեխային հանելու համար:
- Իդեալական տարբերակում ծառայությունը պետք է լինի գաղտնի, անանուն և անվճար, օրական 24 ժամ և շաբաթվա 7 օրը հասանելի կարող է մատուցվել հեռախոսազանգի կամ այլ տեխնոլոգիաների ինչպիսիք են՝ տեքստային հաղորդագրությունները, համացանցի խոսակցական ծառայությունները, քննարկման ֆորումները, էլեկտրոնային հաղորդագրությունները և անմիջական հանդիպումները միջոցներով:
- Երեխայի համար հեռախոսային ծառայությունները գործում են կարևոր այլ ծառայությունների հետ համատեղ՝ սերտ համագործակցելով կրթական հաստատությունների, հիվանդանոցների, իրավապահ մարմինների, դատական համակարգի, կացարանների և երեխային վերաբերվող այլ ծառայությունների հետ:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Երեխաները պետք է գիտակցեն, որ իրենք միայնակ չեն: Այն դեպքերում, երբ նրանք չեն կարող կիսվել ընտանիքի անդամի, ընկերոջ կամ որևէ ծառայությունների հետ, նրանք պետք է համոզված լինեն, որ կարող են անանուն և գաղտնի դիմել աջակցության ծառայություններին:
- Երեխայի համար հեռախոսային ծառայությունների հետ կապ հաստատելը հաճախ երեխաների ներգրավվածության և աջակցման ծառայությունից օգտվելու ցանկության առաջին նշանն է, իսկ շփման դրական փորձը նրանց կարող է օգնել վստահ ու քաջալերված զգալ ավելի շատ ծառայություններից օգտվելու համար:
- Երեխաները կարող են հեռախոսազանգի միջոցով անանուն մնալ և միայն հաղորդել իրենց կամ այլ երեխաների նկատմամբ կատարված բռնության մասին: Նման մոտեցումը պետություններին կօգնի հավաքագրելու հետախուզման համար անհրաժեշտ և հնարավոր հանցագործությունների մասին տեղեկություն՝ հարկ եղած դեպքում նաև օգտագործել տվյալները:

Լավագույն փորձը

- Այն պետություններում, որտեղ վստահության հեռախոսային ծառայություններ դեռևս գոյություն չունեն, նախ և առաջ պետք է հայթայթել ֆինանսավորման աղբյուրներ և հեռախոսային ծառայությունների սեփականատեր, ինչը թույլ կտա ձեռք բերել ուղիղ և կայուն կապ:
- Անհրաժեշտ է՝ հաշվի առնելով հասանելի միջոցները և առկա ծառայությունները, օրինակ՝ լսելու, խորհրդատվության և աջակցության կամ համապատասխան գործակալության ուղղորդումը, ստեղծել հեռախոսային աջակցություն մատուցող ծառայություն:
- Անհրաժեշտ է ստեղծել միմյանց հետ համագործակցող հիմնական գործակալությունների ցանց, որտեղ պետք է փոխանցվի հեռախոսազանգը՝ երեխաներին աջակցող կարևոր մարմինների

ներսում՝ ձեռք բերելով շփման կոնտակտային անձ, իսկ իրավապահ մարմնի պետք է մատչելի և հասանելի լինի մասնագետի օգնությունը և աջակցությունը:

- Բոլոր աշխատողներին՝ նախքան աշխատանքի ընդունելը, ինչպես նաև աշխատելու ընթացքում, անհրաժեշտ է ստուգել և գնահատել նրանց՝ երեխաների հետ աշխատելու համապատասխանելիությունը: , Վերջիններս պետք է անցնեն համապատասխան վերապատրաստում և ստանան ուղեցույց, որպեսզի իրենց պաշտոնը ստանձնեն զինված բարձր և կայուն չափանիշներով: Անախորժ դեպքերի հետ առնչվելիս աշխատողները պետք է նաև ստանան անհրաժեշտ սոցիալական աջակցության:
- Անհրաժեշտ է մշակել ռիսկի վրա հիմնված ողջամիտ որոշում կայացնելու վստահելի գործընթացներ և դրանցով առաջնորդվել, երբ հեռախոսազանգով ստացվում է որևէ տեղեկություն ՝ համաձայն տվյալների պաշտպանության մասին օրենսդրության և առկա կանոնների:
- Հեռախոսային ծառայությունների օգտագործումն անհրաժեշտ է խրախուսել երեխաների և պատանիների շրջանակում՝ տեղադրելով հեռախոսահամարը դպրոցներում և երիտասարդական հաստատությունների ցուցանակներին, ներառյալ՝ համապատասխան առցանց հարթակները:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Երեխայի միջազգային վստահության հեռախոսային ծառայությունը նպատակ ունի ամրապնդել երեխայի պաշտպանության համակարգն ամբողջ աշխարհում, ներառյալ՝ ազգային, տարածաշրջանային և ներպետական շահագրգիռ կողմերի և գործընկերների հետ աշխատանքը, ինչպես նաև երեխաների համար ազգային վստահության անվճար հեռախոսային ծառայությունների ստեղծմանն ու համախմբմանն աջակցությունը: Անդամները և գործընկերներն ապահովվում են անհրաժեշտ հնարավորություններով՝ գիտաժողովների, վերապատրաստման և տեղեկատվության փոխանակման միջոցով իրենց ծառայությունները բարելավելու համար: Լրացուցիչ տեղեկությունները հասանելի է www.childhelplineinternational.org կայքում:

Կարողություն 12 – ԵՍՇԲ դեպքերի թեժ գիծ

Սահմանում

- Անհրաժեշտ է ապահովվել թեժ գծի առկայությունը, որպեսզի առցանց ապօրինություններ կատարելու կասկածները, ներառյալ՝ երեխայի նկատմամբ բռնության վերաբերյալ նյութերը, հաղորդվեն:
- Այն պահին, երբ հաստատվում է, որ ստացվել է երեխայի սեռական բռնության վերաբերյալ նյութ, թեժ գիծը պետք է աշխատի բարձր տեխնոլոգիաների մատակարարի հետ՝ երաշխավորելու, որ բովանդակությունը հանված է արդյունաբերության ծառայություններից այնքան արագ և արդյունավետ, որքան հնարավոր է և գործը թեժ գծի կողմից ուղարկված է իրավապահ մարմիններին, որոնք պատասխանատու են քննելու ԵՍՇԲ գործերը՝ հետագա նախաքննության և զոհին հայտնաբերելու համար:
- Թեժ գիծը կարող է գործել որպես (INHOPE) ՀՈԻՅՍՈՎ միջազգային ցանցի մաս, որը համատեղ աշխատանքի շնորհիվ տարածում է տեղեկատվություն ԵՍՇԲ նյութը համացանցից հանելու մասին, անկախ նրանից, թե աշխարհի որ մասում է այդ նյութն հայտնաբերվել:
- Շարունակվելու է (INHOPE) ՀՈԻՅՍՈՎ-ի հաղորդումներ ստանալու և դրանց ընթացք տալու ընդհանուր գործընթացը, հետևաբար անհրաժեշտ է ապահովել համապատասխանելիությունը (INHOPE) ՀՈԻՅՍՈՎ-ի լավագույն փորձի հետ:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Թեժ գիծը կամ հաղորդում տալու պորտալը հանդիսանում է առցանց ԵՍՇԲ վերաբերյալ կասկածելի նյութի հայտնաբերման դեպքում հասանելի և ապահով հարթակ:
- Արդյունավետ թեժ գիծն օգնում է ԵՍՇԲ վերաբերվող նյութը համացանցից արդյունավետորեն հանելուն ծառայության գլխավոր էջի միջոցով, որը նվազեցնում է այդ նյութի հասանելիությունը:
- Արդյունավետ թեժ գիծը հանրությանը և արդյունաբերությանը պետք է վստահեցնի, որ հաղորդված նյութն արգելված համարվելու դեպքում, փոխանցվելու է համապատասխան իրավապահ մարմնին և/կամ համացանցի ծառայությունների մատակարարին (Internet Service Provider(ISP)) հետագա գործողությունների համար:

Լավագույն փորձը

- ԵՍՇԲ վերաբերվող նյութի հետ արդյունավետ պայքարելու համար,, պետությունը պետք է ներկայացնի արձանագրություններ՝ համապատասխան ներպետական իրավիճակին: Աշխատանքները զրոյից սկսելու դեպքում, կարևոր է վերանայել առկա օրենսդրությունը և նախքան թեժ գծի կիրառումը, գործող օրենսդրության մեջ կատարել անհրաժեշտ փոփոխություն (կամ մշակել նոր օրենսդրություն):
- Ուժեղ և համապատասխանեցված գործողություններ են անհրաժեշտ կիրառել՝ թեժ գծից հաղորդումներն ընդունելու, առաջնահերթություն տալու, գործողություններ ձեռնարկելու և ուղղորդելու համար:
- Այլ պետության համացանցում տեղադրված ԵՍՇԲ վերաբերվող ցանկացած հաղորդում անհրաժեշտ է ուղղորդել այդ պետության իրավապահ մարմիններին Ինտերպոլի միջոցով, եթե առկա չէ այլ թեժ գիծ:
- Թեժ գիծը կամ հաղորդման մեխանիզմները պետք է հանրայնորեն բարելավվեն:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- (INHOPE) ՀՈՒՅՍՈՎ հիմնադրամն աջակցում է աշխարհում նոր համացանցային թեժ գծերի զարգացմանը: Այն ապահովում է ԵՍՇԲ նյութերի արձագանքման արագ գործողություններ ձեռնարկելը համացանցում, որտեղ տեղադրված են ապօրինի նյութը: Առցանց ուղեցույցը հասանելի է GSMA / (INHOPE) ՀՈՒՅՍՈՎ-ում: Այն երկրների համար, որոնք արդեն ունեն թեժ գիծ, (INHOPE) ՀՈՒՅՍՈՎ-ը նաև աջակցում է թեժ գծի երկարաժամկետ զարգացմանը և հարցի վերաբերյալ վերապատրաստմանը: Լրացուցիչ տեղեկությունները հասանելի են www.inhope.org կայքում

Կարողություն 13 – Կրթական ծրագիր

Սահմանում

- Անհրաժեշտ է ԵՍՇԲ վերաբերյալ իրազեկությունը բարձրացնելու ազգային կրթական ծրագիր (ինչպես ցանցից դուրս, այնպես էլ առցանց)՝ ԵՍՇԲ դեպքերի վերաբերյալ գիտելիքներով զինելով երեխաներին, դեռահասներին, ծնողներին, խնամակալներին, խնամողներին և պրակտիկ աշխատողներին; պաշտպանվելու իրենց իրավունքով; տեղեկություններով, որտեղ կարող են գտնել օգնություն ու աջակցություն և հաղորդել ԵՍՇԲ վերաբերյալ:
- Ծրագրի հաղորդագրությունները պետք է ներառեն վերջնական միտումներ և զարգացումներ և պարբերաբար մատուցվեն հասարակությանը: Նրանք պետք է մշակվեն նրբանկատորեն ՝ հաշվի առնելով նյութի հնարավոր ազդեցությունը հանրության վրա:
- Անհրաժեշտ է ապահովել մի շարք ուշագրավ, տարիքին համապատասխան միջոցներ, ներառյալ՝ ֆիլմեր, դասընթացի ծրագրեր և առցանց ուսուցման հնարավորություն:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Կրթական ծրագիրը հնարավորություն է ընձեռում քննարկել ԵՍՇԲ դեպքերը դպրոցներում, պետական հաստատություններում և համայնքային այլ հաստատություններում՝ նպաստելու իրազեկության բարձրացմանը և հանցագործության կանխարգելմանը: Այն նաև տրամադրում է երեխաներին, դեռահասներին, ծնողներին, խնամակալներին, խնամողներին և պրակտիկ աշխատողներին տեղեկություններ, թե որտեղ կարելի է դիմել խորհրդատվության և աջակցության համար և որտեղ կարելի է բռնության դեպքի վերաբերյալ հաղորդում ներկայացնել:
- Ծրագիրը կօգնի երեխաներին և դեռահասներին ավելի լավ հասկանալ ԵՍՇԲ ռիսկերը և գործոնները, որոնք իրենց կարող են խոցելի դարձնել զոհացման տեսանկյունից, ինչպես նաև տրամադրել տեղեկատվություն իրենց ծնողներին/ խնամակալներին/խնամողներին, որը նրանց կզինի հանցագործներից ինքնուրույն պաշտպանվելու հնարավորությամբ:
- Ծրագիրը նաև կօժանդակի երեխաների հետ աշխատող պրակտիկ մասնագետներին՝ տեղում հայտնաբերել ԵՍՇԲ դեպքերի ցուցանիշները, և լիազորում է վերջիններիս՝ զոհերին և նրանց ընտանիքներին ավելի շատ օգնել ՝ աջակցություն ստանալիս և հաղորդում ներկայացնելիս:

Լավագույն փորձը

- Ծրագիրը պետք է մշակվի ազգային մակարդակով՝ ապահովելու համար հաղորդագրությունների փոխանակման մեջ հետևողականությունը, սակայն պետք է տրամադրվի տեղական բոլոր մարմիններին: Իդեալական տարբերակն է ծրագիրը ներգրավել ներպետական ուսումնական պլանի մեջ՝ լիարժեք ազգային դերակատարությունն ապահովելու համար: Այն կարող է ներառվել բովանդակությամբ մոտ ծրագրերում, օրինակ՝ սեռ, հարաբերություններ:
- Կրթական ռեսուրսների ազգային համակարգը հնարավորություն կտա տեղեկացված լինելու և շարունակելու հաղորդագրությունների փոխանակումը՝պահպանելով ժամանակակից և առկա ռիսկերը:
- Որոշակի երկրների կամ տարածաշրջանի համատեքստում անհրաժեշտ է ներառել ռեսուրսներ՝ երաշխավորելու ազգային մակարդակով անդրադարձը ԵՍՇԲ խնդիրներին և հնարավորություն ընձեռելու այդ թեմայի մասին ցանկացած ազգային խոչընդոտները հաղթահարելու քննարկումը: Երեխաները պետք է ներառվեն ռեսուրսների զարգացման գործընթացի մեջ:

- Առցանց հարթակը կարող է մշակվել՝ խորհուրդներ, աջակցություն և ռեսուրսների հեշտ հասանելիություն ապահովելու համար, երեխաների հետ աշխատողների, անձամբ երեխաների և լայն հասարակության համար: Այն կարող է դասակարգվել ըստ տարիքի, որպեսզի համապատասխան և մատչելի լինի հաղորդակցման համար:
- Լրատվամիջոցների հնարավորությունները, արդյունաբերության և միջազգային նորարարությունների նախաձեռնությունները, ինչպիսիք են՝ Ավելի անվտանգ համացանցի օրը (Safer Internet Day), պետք է առավելագույնս բարելավվեն՝ տարածելու հաղորդագրությունները և միջոցները:
- Անհրաժեշտ է վերապատրաստել կրթության ոլորտի մասնագետներին՝ ապահովելու համար, որ նրանք կարող են հաղորդել խելամիտ հաղորդագրությունները:
- Երեխաների օգնության համար մշակված ռեսուրսները կամ ծրագրերը պետք է հստակեցնեն հաղորդման գործընթացները: Ծրագրում ներգրավված մասնագետները պետք է տեղյակ լինեն սեռական բռնության և/կամ շահագործման բոլոր հնարավոր բացահայտումների մասին, և իմանան, թե ինչպես կարելի է դրանց արձագանքել:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Առկա լավագույն փորձի միջոցները կարող են օգտագործել տարբեր միջազգային շահագրգիռ մարմինները, սակայն դրանք պետք է լինեն համահունչ, որպեսզի ապահովեն դրանց համապատասխանելիությունը յուրաքանչյուր երկրի համար:
- Insafe-ն իրավագիտակցության կենտրոնների եվրոպական ցանց է, որը նպաստում է համացանցի անվտանգ և լավագույն օգտագործմանը, համացանցի, բջջային հեռախոսների և առցանց այլ տեխնոլոգիաների դրական, անվտանգ և արդյունավետ օգտագործումը մարդկանց, հատկապես՝ երեխաներին և երիտասարդներին հասանելի դարձնելով, : Այս տեղեկատու կենտրոնների կողմից իրականացվող կրթական աշխատանքների մասին մանրամասն տեղեկություններ հասանելի է գտնել www.betterinternetforkids.eu կայքում:
- ՅՈՒՆԻՍԵՖ-ն աջակցում է կառավարություններին և քաղաքացիական հասարակական կազմակերպություններին ԵՍԾԲ կանխարգելման վերաբերյալ տեղեկատվության և կրթության տրամադրման գործընթացում: Լրացուցիչ տեղեկությունները հասանելի են www.unicef.org/protection կայքէջում:

Կարողություն 14 – Երեխայի մասնակցություն

Սահմանում

- Երեխաները և դեռահասները խրախուսվում են և հնարավորություն ունեն հաղորդել իրենց մտքերը և ազդել ԵՍԾԲ դեպքերին վերաբերվող ռազմավարության և պրակտիկայի վրա:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Երիտասարդների իրավունքների բարոյական և արդյունավետ ներգրավվածության ապահովման պահանջը բխում է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված պետության կողմից ստանձնած միջազգային իրավական պարտավորություններից: Կոնվենցիայի բոլոր կողմերը պարտավորվում են, որ երեխաների տեսակետները կլսվեն և պատշաճ քննարկման կենթարկվեն այն բոլոր հարցերի շուրջ, որոնք վերաբերելի են իրենց՝ երեխաների տարիքի և հասունության համապատասխան (Տես Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածը): Դրանով ճանաչվում և հարգվում է երեխաների արժանապատվությունը և ազատությունը:
- Դեռահասների բարոյական և արդյունավետ մասնակցության առավելությունները ներառում են՝ երեխաների և դեռահասների ներգրավվածության աճը, որը նպաստում է ծառայությունների և որոշում կայացնելու վերաբերյալ վստահության ամրապնդմանը, նորարար առաջարկների և բարեփոխումների՝ հիմնված ծառայություններից օգտվողների փորձի վրա, ծառայությունների բարելավմանը, ինչը կօգնի օգտագործողներին դառնալ առավել տեղեկացված, ինչպես նաև հետադարձ կապ ստեղծելը, որը կարող է շարունակական կերպով նպաստել ծառայությունների բարելավմանը:

Լավագույն փորձը

- Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան տրամադրում է սկզբունքների վերաբերյալ մանրամասն ուղեցույցներ, որոնք ընդհանուր առմամբ պետք է նպաստեն երեխաների և դեռահասների մասնակցությանը: Հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ պետությունը պետք է խուսափի այն մոտեցումներից, որոնք սահմանափակում են երեխաների տեսակետների արտահայտմանը կամ թույլատրում են նրանց արտահայտելու իրենց կարծիքը, սակայն ձախողում են իրենց տեսակետներին պատշաճ հաշվի առնելը: Որպեսզի մասնակցությունը լինի արդյունավետ և իմաստալից, այն պետք է ընկալվի որպես գործընթաց, այլ ոչ որպես միանվագ գործողություն:
- Հիմնական առանձնահատկությունն այն է, որ երեխաների և դեռահասների ներգրավմամբ բոլոր գործընթացները պետք է լինեն թափանցիկ, տեղեկատվական, կամավոր, հարգալից, համապատասխան, (child-friendly), ներառական, վերապատրաստողների կողմից աջակցվող, ապահով, նրբազգաց ռիսկերի նկատմամբ և հաշվետու:
- Հաճախ առնվազն առաջին փուլում ոչ ֆորմալ մոտեցումը՝ երեխաներին և դեռահասներին ներգրավվելու, խորհուրդ տալու համար ավելի արդյունավետ է, քան կառուցողական երկխոսությունը:
- Անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչպես ներառել դեռահասների տեսակետները որոշման-կայացման գործընթացի մեջ՝ երաշխավորելու, որ իրենք ունեն ողջամիտ ակնկալիքներ իրենց դերի և գործընթացը հասկանալու վերաբերյալ:
- Զգույշ և փուլային մոտեցման անհրաժեշտությունը հատկապես կարևոր է խոցելի երեխաների կամ այն երեխաների համար, ում խնդրում են կիսվել իրենց տեսակետներով դժվար և անձնական խնդիրների վերաբերյալ: Առավել դժվար է համագործակցել բռնության զոհերի հետ, այդ իսկ պատճառով, ավելի շահավետ կլինի համագործակցել այն կազմակերպությունների հետ, որոնք արդեն ճանաչված են և վստահելի են զոհերի համար, քանի որ խմբային մոտեցումը կարող է լինել որպես արդյունավետ միջնորդային կամ օժանդակող միջոց:

- Կարևոր է հետադարձ կապ ապահովել երեխաների և դեռահասների հետ, քանի որ այն համարվում է գնահատման լավագույն փորձը:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան մանրամասն ուղեցույցներ է տրամադրում այն սկզբունքների վերաբերյալ, որոնք ընդհանուր առմամբ պետք է հիմնավորեն երեխաների և երիտասարդների մասնակցությունը, մասնավորապես՝ ՄԱԿ-ի կոմիտեի թիվ 12 (2009) Ընդհանուր տեղեկություններ Երեխայի լսված լինելու իրավունքի մասին (the right of the child to be heard) օգտակար աղբյուր է- www2.ohchr.org/English/bodies/crc/docs/AdvanceVersions/CRC-C-GC-12.pdf
- Բացի դրանից, Եվրոպայի խորհուրդը մշակել է Երեխայի մասնակցության գնահատման գործիք, որն ապահովում է երեխաների և երիտասարդների իրավունքը նրանց մտահոգող հարցերում մասնակցելու իրավունքի խթանման առաջընթացի չափման համար, http://www.coe.int/t/dg3/children/participation/Child_participation_AssementTool_en.pdf
- Երեխայի իրավունքների միջազգային համացանցը (CRIN) համաշխարհային հետազոտության, քաղաքականության և շահերի պաշտպանության կազմակերպություն է, որն իր կայքում՝ www.crin.org տրամադրում է երեխաների իրավունքների մասին լայն տեղեկատվություն և ուղեցույց:

Կարողություն 15 – Հանցագործին աջակցող համակարգեր

Սահմանում

- Անհրաժեշտ է ստեղծել երեխաների նկատմամբ սեռական հետաքրքրություն ունեցող անձանց աջակցման համակարգեր, որպեսզի այդ անձինք զրկվեն սեփական նախասիրության հիմքով առաջնորդվելուց, երեխաներին սեռական բռնության ենթարկելուց, ինչպես նաև կանխվեն համացանցում երեխաների սեռական բռնության վերաբերյալ նյութերը դիտելու դեպքերը նախքան նրանց կողմից հանցանք գործելը:
- Անհրաժեշտ է ստեղծել հանցագործության համար դատապարտված անձանց աջակցման համակարգ, որը կծառայի նրանց վերականգնման համար՝ կանխարգելելու նրանց կողմից կրկնահանցավորությունը: Սա ներառում է սեռական հանցագործին միջամտություն տրամադրելը, որը կենտրոնացված է հատուկ ռազմավարությունների վրա՝ դադարեցնելու համար բռնի վարքը, լինելու հաշվետու և պատասխանատվություն վերցնելու վնասի հատուցման համար: Միջամտությունը չի առաջարկում համաներում կամ բռնի գործողությունների ներում, ինչպես նաև նախատեսված չէ մասնակիցներին պատժելուն կամ նվաստացնելուն: Միջամտության հիմնական թիրախն է օգնելն հանցագործին զարգացնելու իր ուժեղ կողմերը ռիսկի կառավարման ժամանակ:
- Սեռական վնասակար վարք դրսևորող երիտասարդների համար առկա է աջակցման համակարգ:
- Աջակցման ծառայությունները հասանելի են սեռական հանցագործների ընտանիքի և ընկերների համար:
- Աջակցման համակարգերը տրամադրվում են տարբեր կազմակերպությունների ՝ ինչպես իրավապահ մարմինների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների կողմից:
- Կանխարգելիչ հաղորդակցությունները կիրառելի են հանցագործների և հավանական հանցագործների համար:
- Աջակցություն ցուցաբերող մասնագետներն ունեն համապատասխան գիտելիքներ, օժտված են համապատասխան հմտություններով և գիտելիքներով՝ ծառայությունն արդյունավետորեն մատուցելու համար:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Եթե երեխայի սեռական բռնության հակում ունեցող անձի վարքը նկատելի է դեռ հանցագործությունը չսկսված փուլերում, պետք է արձագանքել նախքան այդ բռնության կատարումը:
- Երեխայի նկատմամբ սեռական հանցագործություն կատարած որոշ անհատների համար միջամտությունը կարող է զգալիորեն նվազեցնել հետագայում հանցագործություն կատարելու վտանգը:
- Իրավապահ մարմինները, քրեակատարողական հիմնարկները և դատական համակարգը գերակշռող է, եթե աշխատանքը կենտրոնացած է հանցագործների միայն հետապնդման, այլ ոչ թե առաջին հերթին նրանց հանցանքները կանխելու վրա:

Լավագույն փորձը

- Միջամտության ծրագրերը պետք է մասնակիցներին տրամադրեն գործնական միջոցներ՝ հանցագործությունները/կրկնահանցագործությունները կանխելու համար:
- Պետք է ստեղծվի դյուրին և հասանելի անանուն թեժ գիծ կամ ծառայություն, որպեսզի իրենց վարքագծով մտահոգված մարդիկ կարողանան դիմել մասնագետներին՝ խորհուրդ ստանալու համար՝ կիսելով իրենց մտահոգությունները, նախքան նրանք կկատարեն հանցագործություն / կրկնահանցագործություն:
- Ծառայությունը պետք է հասանելի լինի նաև ընտանիքին և ընկերներին՝ մասնագիտական խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու համար:
- Այս ծառայությունները պետք է գովազդվեն և ընդգծեն կանխարգելման առաջնայնությունը, ինչպես նաև երաշխավորել մասնակիցների գաղտնիությունը:
- Բացի միջամտությունից, անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրվի ցանկացած համապատասխան բժշկական և հոգեբանական աջակցություն:
- Բժշկական ոլորտի մասնագետները պետք է անցնեն իրազեկվածության բարձրացման հատուկ վերապատրաստում, որպեսզի նրանք կարողանան պատշաճ վերաբերմունք դրսևորեն այն անձանց հետ, ովքեր դիմում ն իրենց երեխաների նկատմամբ անհարիր սեռական զգացմունքների և վարքագծի հիմնախնդիրներով:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Գոյություն ունեն լավագույն փորձի ծրագրերի օրինակներ, որոնք կարող են հիմք հանդիսանան այդպիսի ծրագրերի մշակման համար այն երկրներում, որոնք դեռևս չունեն նմանատիպ ծրագրեր: Օրինակ.
    - www.dont-offend.org - գերմանական ՀԿ-ը, որն առաջարկում է անվճար և գաղտնի միջամտություն այն մարդկանց համար, ովքեր փնտրում են բուժում երեխաների նկատմամբ իրենց սեռական նախասիրություններից ձերբազատվելու համար:
    - www.lucyfaithful.org.uk - Մեծ Բրիտանիայում ստեղծված ՀԿ է, որը տրամադրում է մասնագիտական ծառայություն սեռական բռնության հակում ունեցող մեծահասակ տղամարդկանց և կանանց համար, ինչպես նաև ոչ համապատասխան սեռական վարքագիծ դրսևորող երիտասարդների համար:

Կարողություն 16 – Նյութերի հեռացման ընթացակարգ

Սահմանում

- Անհրաժեշտ է ժամանակին ապահովել երեխաների սեռական բռնության վերաբերյալ նյութը հեռացնելու/վերացնելու ընթացակարգը, երբ ընկերությունը հաստատում է դրանց ներկայությունն իր կայքէջում: Հաղորդումները կարող են ներկայացվել հաճախորդների, հասարակության ներկայացուցիչների, իրավապահ մարմինների կամ թեժ գծի կազմակերպությունների կողմից:
- Երբ երեխայի սեռական բռնությանը վերաբերվող նյութը տեղադրված է մեկ այլ երկրից, սակայն չի հեռացվել աղբյուրից, համացանցի ծառայության մատակարարներն օգտագործում են մատչելի տեխնիկական միջոցներ, ինչպիսիք են՝ արգելափակումը կամ ֆիլտրումը՝ այդ նյութի հասանելիությունը կանխելու համար:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Եթե երեխայի սեռական բռնությունների վերաբերյալ նյութը հեշտ հասանելի է համացանցում, դա կավելացնի հանցագործությունների քանակը, քանի որ նպաստելու է այլոց նույնպես դիտել ապօրինի նյութը, որի յուրաքանչյուր դիտումն օրենքի խախտում է:
- Ամեն անգամ նյութը դիտելիս պատկերված երեխան կրկնազոհացվում է:
- Համացանցային ծառայությունների օպերատորների կողմից նյութը հեռացնելը նվազեցնում է համացանցում երեխայի սեռական բռնության նյութի ծավալը:
- Երկրից դուրս տեղադրված երեխաների սեռական բռնության վերաբերյալ նյութի արգելափակումը կխափանի հանցագործների համար հասանելիությունը, սակայն դա չի հանդիսանում երկարաժամկետ լուծում համացանցում նյութի վերացման համար: Հետևաբար, այն պետք է հեռացվի սկզբնաղբյուրից: Նման մոտեցումը երաշխավորում է, որ յուրաքանչյուր երկիր պատասխանատվություն է վերցնում այդ բովանդակության նյութի հեռացման համար, երբ պարզվում է, որ այն տեղադրվել է տվյալ երկրում:
- Իրավական կարգավորումը հանդիսանում է հիմնական, բայց ոչ միակ մեխանիզմը համացանցից վերացնելու երեխայի սեռական բռնությանը վերաբերվող նյութը: Ինքնակարգավորումը կարող է հանգեցնել նման արդյունքների, երբ համացանցի ծառայության մատակարարները և այդ ոլորտի այլ կազմակերպությունները համագործակցում են միմյանց հետ երեխայի սեռական բռնության նյութերը հեռացնելու և դրա հետագա տարածումը կանխելու ուղղությամբ:

Լավագույն փորձը

- Պետք է հետևել INHOPE-ի ՀՈՒՅՍՈՎ երեխայի սեռական բռնության նյութի հասանելիությունն արգելափակելու կամ ժամանակին հեռացնելու միջազգային չափանիշներին համապատասխանող լավագույն փորձին:
- Որպես երաշխիք անհրաժեշտ է SS վստահելի կառուցվածքի առկայություն՝ արդյունաբերության մատակարարների կողմից ապահով տեղեկատվություն ստանալու համար: Հնարավորության դեպքում, գործընթացները պետք է լինեն ավտոմատացված՝ նվազեցնելու տեսանյութը դիտող և դրա ազդեցության ենթարկվող անձանց թիվը:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- INHOPE ՀՈՒՅՍՈՎ միջազգային թեժ գծերի ցանցը կարող է կազմակերպություններին առաջարկել ուղեցույց և աջակցություն՝ օգնելու երեխայի սեռական բռնության նյութի հասանելիությունը կամ մատչելիությունը կանխելու (www. Inhope.org), ներառյալ՝ նյութերի հեռացման ընթացակարգի վերաբերյալ ուղեցույց, որը մշակվել է GSMA Mobile Alliance-ի հետ համատեղ: Բացի այդ, Միացյալ Թագավորության թեժ գիծը՝ Internet Watch Foundation-ն, առաջարկում է խորհրդատվություն և ուղղորդում (www.iwf.org.uk):
- Տեխնոլոգիական կոալիցիան խրախուսում է տեխնոլոգիական լուծումների զարգացումը, որոնք խոչընդոտում են համացանցի օգտագործմամբ ԵՍՇԲ վերաբերյալ նյութերը տարածելու հնարավորությունը: Այն նաև հետևում և ստեղծում է հարթակներ տարբեր ոլորտներում համագործակցության և լավագույն փորձի փոխանակման համար: (www.technologycoalition.org):

Կարողություն 17 – ԵՍՇԲ վերաբերյալ հաղորդումը

Սահմանում

- Արտադրությունը տեղադրում է գործընթացներ և հատկացնում ռեսուրսներ՝ երեխայի առցանց սեռական շահագործման և բռնության դեպքերը հայտնաբերելու և իշխանություններին հաղորդելու համար:
- Ընկերությունների աշխատակազմը զինված է անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով, որպեսզի արդյունավետ արձագանքի առցանց ԵՍՇԲ դեպքերի մասին:
- Առողջության և բարօրության ծրագիրը պետք է հասու լինի բոլոր այն աշխատակիցներին, ովքեր որևիցե առնչություն ունեն երեխայի սեռական շահագործման նյութի հետ:
- Անհրաժեշտ է ապահովել իրավական պաշտպանություն, որպեսզի իրականացվի լիարժեք և արդյունավետ հաղորդում առցանց ԵՍՇԲ մասին, ներառյալ՝ բովանդակությունը փոխանցելու իրավապահ մարմիններին կամ այլ նշանակված գործակալությանը:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- ԵՍՇԲ-ն շարունակում է մնալ ամենաքիչ հաղորդվող հանցագործություններից մեկը, որոնց մեծամասնությունը տեղի է ունենում «փակ դռների ետևում»: Համացանցը հազվագյուտ պատուհան է առաջարկում հատկացնել դեպի այս հանցագործությունները: Բացի իր հաճախորդներին և ծառայությունները պաշտպանելու, ոլորտի գործողությունները կարող են նպաստել զոհերի և հանցագործների հայտնաբերմանը, որոնք հակառակ դեպքում կարող են երբեք չհայտնաբերվել:
- Ճյուղային հաշվետվողականությունը հնարավորություն է տալիս ընկերություններին ապահովել առավել անվտանգ հարթակներ և առաջարկել անվտանգ ծառայություններ երեխաների և դեռահասների համար, ինչպես նաև զսպել հանցագործներին:
- Ապօրինի նյութերը հեռացնելու կայուն ծրագրերն ու ընթացակարգերն օգնում են պաշտպանել աշխատակազմին անհարկի ազդեցությունից, որը կարող է ազդել իրենց առողջության և բարօրության վրա և նվազեցնել նկարագրված նյութերի մեջ զոհ(երի) կրկնազոհացումը:
- Կայուն ծրագրերը և ընթացակարգերն ընկերություններին հնարավորություն են ընձեռում առաջնահերթություն տալ և ապահով կերպով հեռացնել ապօրինի նյութերը:
- Իրավաբանական պաշտպանությունն ընկերություններին այդ նյութը մշակելու լիազորություն և վստահություն է տալիս:

Լավագույն փորձը

- Առցանց ԵՍՇԲ դեպքերի վերաբերյալ որակյալ և արդյունավետ արձագանքը երաշխավորելու համար պետք է հատկացվեն բավարար միջոցներ:
- Տեխնոլոգիական ընկերությունների բոլոր աշխատակիցները, որոնք կարող են առնչություն ունենալ ԵՍՇԲ դեպքերի հետ, պետք է կամավոր համաձայնվեն մասնակցելու այս աշխատանքին, ունենան անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ և համապատասխանաբար լինեն ստուգված, վերապատրաստված և աջակցված:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Առկա են մի շարք առաջատար միջազգային կազմակերպություններ և ձեռնարկություններ, որոնց ընկերությունները կարող են մասնակցել, որպեսզի ձեռք բերեն լավագույն փորձ, ստանան խորհրդատվություն և ուղեցույց, ինչը կզարգացնի վերջիններիս հաղորդում տրամադրելու գործընթացները և կբարեկարգի ընթացակարգերը: Դրանք ներառում են.
  - Ամերիկայի Միացյալ Նահանգների Կորած և շահագործված երեխաների ազգային կենտրոն (the United States National Center for Missing and Exploited Children) (www.missingkids.org)
  - Տեխնոլոգիական կոալիցիա (the Technology Coalition) (www.technologycoalition.org)

Կարողություն 18 – Նորարարական լուծումների զարգացում

Սահմանում

- Անհրաժեշտ է զարգացնել նորարարական տեխնոլոգիական լուծումները, ինչը կնպաստի առցանց ԵՍՇԲ դեպքերի կանխարգելումն ու վերացումը կամ մշակել նոր մոտեցումներ:
- Ոլորտում առանձնահատուկ գիտելիքների և հմտությունների պրոակտիվ փոխանակումը համապատասխան շահագրգիռ կողմերի հետ բարձրացնում է առցանց ԵՍՇԲ նվազեցնելու հավանականությունը:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Տեխնոլոգիական ընկերություններն ունեն փորձ կանխատեսելու տեխնոլոգիական զարգացումները և բացահայտելու նոր և առաջացող առցանց միտումները և մոդելները, որոնք կարող են կիրառվել երեխայի սեռական հանցագործություն կատարած անձանց կողմից: Հաշվի առնելով այլ շահագրգիռ կողմերի գիտելիքները հանցագործի և զոհի վարքագծի մասին, նման մոտեցումները կարող են նպաստել նոր միտումների զարգացմանը և թույլ տալ իրավապահ մարմիններին պաշտպանել զոհերին և հավանական զոհերին և ապահովել նրանց անվտանգությունը:

Լավագույն փորձը

- Վերջին տարիներին միջազգային տեխնոլոգիական առաջատար ընկերություններից մի քանիսը մեծ ներդրում են կատարել իրենց հարթակներում առցանց ԵՍՇԲ դեպքերի կանխարգելման և վերացման համար ինչպես նաև նոր և նորարարական գործիքներ և մեթոդներ մշակելու համար: Օրինակ՝ ընկերությունները մշակել են բարդ գործիքներ և մեթոդներ՝ կանխելու հանցագործների համար համացանցում երեխաների նկատմամբ սեռական բռնությանը վերաբերվող նյութերին հասանելիությունը, ինչը հանգեցրեց այն մարդկանց թվի նվազմանը, ում հասանելի էր տվյալ ապօրինի նյութը որոնողական համակարգերի, վեբ-փոստի և սոցիալական մեդիահարթակների միջոցով: Ընկերություններին խորհուրդ է տրվում փոխանցել այս և այլ լավագույն փորձը հնարավորինս լայն շրջանակների հետ:
- Այլ տեխնոլոգիական ընկերություններին անվճար հասանելի գործիքներ տրամադրելը հնարավորություն կընձեռի ծառայություններ մատուցողներին, որպեսզի նրանք ունենան արդյունավետ մեթոդներ բացահայտելու և իրենց ծառայություններից հեռացնելու սեռական բռնության վերաբերյալ նյութերը, նաև կանխելու առցանց սեռական շահագործումը: Օրինակ՝ Մայքրոսոֆթի անվճար լուսանկարով ԴՆԹ տեխնոլոգիան (PhotoDNA) հնարավորություն է տալիս օգտատերերին հասարակ համադրման և համապատասխանության միջոցով նույնացնել երեխաների սեռական բռնության բացահայտած նկարները :
- Առանձին ընկերություններ կարող են ձեռնարկել լրացուցիչ դրական քայլեր՝ իրենց հարթակը/ծառայությունը հնարավորինս անվտանգ պահելու համար, ներառյալ՝ տեղադրելով վահանակներ օժանդակ ծառայությունների մասին; նշելով տեղական իշխանությունների մասին, ում կարելի է հաղորդել ցանցում ոչ պատշաճ սեռական շփման կամ նյութի գտնվելու վերաբերյալ; մասնավորեցնելու ընդհանուր դրույթները և պայմանները կամ վարքագծի կանոնները, որոնք բացահայտ արգելում են երեխաներին սեռական շահագործման բովանդակության մասին; մշակելով և կիրառելով երեխաների սեռական բռնության նյութի ծանուցման և վերացման հստակ գործընթաց և արգելափակելով մուտքը դեպի երեխաների սեռական բռնության նյութը, որը չի հանվել սկզբնաղբյուրից:
- Առցանց ԵՍՇԲ դեպքերի վերաբերյալ ընկերությունների միջև համագործակցության, լավագույն փորձի ու կերտած դասերի փոխանակման համապատասխանեցումը կարևոր քայլ է այդ ընկերությունների կողմից մատուցվող ավելի մեծ թվով առցանց ծառայությունների միջոցով երեխաների սեռական հանցագործությունների կանխման և վերացման համար:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Առկա են մի շարք առաջատար միջազգային կազմակերպություններ և նախաձեռնություններ, որոնցով ընկերությունները կարող են ստանալ գործնական լավագույն խորհուրդներ և աջակցություն և նպաստել նորարարական տեխնիկական լուծումների մշակմանը: Դրանք ներառում են.
    - Տեխնոլոգիական կոալիցիան խրախուսում է համացանցի օգտագործման հնարավորությունը երեխաների սեռական շահագործման և/կամ երեխայի սեռական բռնության նյութի տարածման համար խոչընդոտող տեխնոլոգիական լուծումների զարգացումը: Այն նաև ձգտում և ստեղծում է հարթակներ տարբեր ոլորտներում համագործակցության համար: (www.technologycoalition.org)
    - Անհրաժեշտ է սերտ համագործակցություն տեխնոլոգիաների, կառավարությունների և ՀԿ-ների միջև, որպեսզի տեխնոլոգիան օգտագործվի հանցագործ վարքի դեմ պայքարելու, զոհերին փրկելու և խոցելի երեխաներին պաշտպանելու համար (www.wearethorn.org)
    - Միջազգային ոլորտին առնչվող արդյունաբերական համագործակցության մեխանիզմների այլ օրինակներ են՝ GSMA բջջային հեռախոսների դաշինքը (Mobile Alliance), Երեխաների սեռական բռնության բովանդակության դեմ, Երեխաների առցանց պաշտպանության վերաբերյալ ՏՀՏ կոալիցիան և Երեխաների պոռնոգրաֆիայի դեմ ֆինանսական կոալիցիան:
    - ՄԵՆՔՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՆՔ երեխաների առցանց շահագործմանը վերջ դնելու համաշխարհային դաշինքը (Global Alliance to End Child Sexual Exploitation Online) – միջազգային նախաձեռնություն է, որն ուժեղացնում է համագործակցությունը վերացնելու առցանց ԵՍՇԲ դեպքերը, մի շարք միջոցառումներ է անցկացրել տեխնոլոգիական արտադրության համար՝ միանալով նոր և նորարարական տեխնոլոգիական լուծումների ստեղծմանը և լավագույն փորձի փոխանակմանը: Ընկերությունները խրախուսվում են մասնակցել հետագա միջոցառումներին:

Կարողություն 19 – Համատեղ հասարակական պատասխանատվություն

Սահմանում

- Ընկերությունները (ներպետական և միջազգային) երաշխավորում են, որ երեխաների անվտանգության խնդիրներն առաջնահերթ են ծառայությունների և ապրանքների մշակման և մատուցման ժամանակ՝ հատուկ ուշադրություն դարձնելով երեխաների անվտանգությանն առնչվող խախտումների՝ ներառյալ սեռական բռնություններից և շահագործումից պաշտպանելու համակարգերի ստեղծմանը:
- Երեխաների անվտանգության նկատառումներն ինտեգրվում են համապատասխան կորպորատիվ քաղաքականության, ընթացակարգերի և գործընթացների մեջ, որպեսզի ընկերությունները համապատասխան միջոցներ ձեռնարկեն բացահայտելու, կանխարգելելու և մեղմելու ԵՍՇԲ դեպքերը:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Տեխնոլոգիական ընկերությունները կարող են օգնել կանխելու առցանց ԵՍՇԲ դեպքերի տարածումը, որն, իր հերթին, կարող է օգնել նվազեցնել զոհերի քանակը:
- Տեխնոլոգիական ընկերությունները կարող են օգնել գտնելու առցանց ԵՍՇԲ դեպքերը, որը կարող է նպաստել, որպեսզի ավելանա այն զոհերի թիվը, ում անվտանգությունն ապահովված է և ովքեր պաշտպանված են, ինչպես նաև հանցագործների տեղանքի հայտնաբերմանը:
- Եթե ներպետական օրենսդրությունը դեռ չի համապատասխանում միջազգային ստանդարտներին, ընկերությունները դեռ հնարավորություն և սոցիալական պատասխանատվություն ունեն իրենց գործարար պրակտիկան կամավոր հիմունքներով համապատասխանեցնելու այդ չափանիշներին:
- Այլ արդյունաբերական ոլորտները, ինչպիսիք են՝ ճանապարհորդության և զբոսաշրջության արդյունաբերությունը, կարող են աջակցել ԵՍՇԲ դեպքերի հայտնաբերմանը, որն, իր հերթին, կարող է նպաստել, որպեսզի ավելանա այն զոհերի թիվը, ում անվտանգությունն ապահովված է և ովքեր պաշտպանված են, ինչպես նաև հանցագործների տեղանքի հայտնաբերմանը:

Լավագույն փորձը

- Ընկերությունները, որոնց ծառայությունները հնարավորություն են տալիս փոխանակելու տեղեկատվություն և/կամ օգտագործողներին շփվելու միմյանց հետ, ունեն հաղորդում ներկայացնելու մեխանիզմ, որպեսզի հաճախորդներին և հասարակությանը հնարավորություն ունենան հայտնել ԵՍՇԲ հնարավոր դեպքերը: Սա պետք է ներկայացվի առցանց և ցանցից դուրս ոլորտներում:
- Յուրաքանչյուր ոք/ խումբ նշանակված է ԵՍՇԲ դեպքերի հաղորդումները մշակելու համար, և ընկերությունը ներդրումներ է կատարում ընկերության շրջանակում այդ հանցագործությունների պրոֆիլը բարձրացնելու համար:
- Ներդնում է երեխայի անվտանգության/ պաշտպանության քաղաքականություն, որը թույլ է տալիս ընկերության ընդհանուր քաղաքականության մեջ ինտեգրելու երեխայի հատուկ անվտանգության ռիսկերը, ներառյալ՝ սեռական բռնությունը և շահագործումը:
- Օգտագործման պայմանները և վարքագծի կանոնները հստակորեն սահմանում են, որ արգելվում է հաճախորդներին օգտագործել ԵՍՇԲ նյութի արտադրությունը, տարածումը կամ դիտումն ընկերության ծառայությունների նպատակների համար կամ ընկերության հարթակն օգտագործելով:

- Անհրաժեշտության դեպքում, ընկերությունը տեղադրում է գործընթացներ՝ ԵՍԾԲ նյութի հեռացման կամ օգտագործման դադարեցման համար:
- Օգտատերերի համար նախատեսված են համապատասխան այնպիսի տեխնիկական միջոցներ, ինչպիսիք են՝ ծնողական հսկողության գործիքները, արգելող/ թույլատրող ցուցակները և բովանդակության զտումը:
- Տարիքին համապատասխան կրթական և իրազեկման տեղեկատվությունը մշակվում է, որպեսզի երեխա օգտատերերն ու նրանց ծնողները, որպես թվային ոլորտում իրազեկ և պատասխանատու քաղաքացիներ, տեղեկացված որոշումներ կայացնեն իրենց առցանց փոխհարահարաբերությունների վերաբերյալ: Ընկերությունները պետք է օգնեն պատասխանատու այն հաղորդագրությունների մշակմանը, զարգացմանը և տարածմանը,, որոնք կհանդիսանա զսպող հանցագործների համար:
- Ընկերությունները կարող են նաև աջակցել երկրներին և այլ ընկերություններին կարողությունների զարգացման հարցում: Իր արդյունավետությունը բարձրացնելու համար այս աջակցության տրամադրումը կարող է համակարգվի այլ կազմակերպությունների հետ, որոնք արդեն իսկ առաջարկում են աջակցություն և/ կամ իրականացվի Համաշխարհային համագործակցության և դրա հետ կապված Հիմնադրամի միջոցով՝ Վերացնելու երեխաների դեմ բռնությունը, որն աջակցում է ամբողջ աշխարհում կարողությունների զարգացման ծրագրերին:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Միջազգային հեռահաղորդակցությունների միությունը, ՅՈՒՆԻՍԵՖ-ը և Երեխայի առցանց պաշտպանության նախաձեռնության գործընկերները ներկայացնում են ՏՀՏ արդյունաբերության ուղեցույցներ երեխայի առցանց պաշտպանությունն ամրապնդելու համար: http://www.itu.int/en/cop/Pages/guidelines.aspx
- ՅՈՒՆԻՍԵՖ-ը մի քանի գործիքներ է ստեղծել ՏՀՏ ոլորտի ընկերությունների համար, ներառյալ՝ երեխաների առցանց անվտանգության գնահատման հատուկ գործիք՝ http://www.unicef.org/csr/toolsforcompanies.html
- Երեխաների դեմ բռնությունը վերացնելու համաշխարհային համագործակցության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություն հասանելի է այստեղ՝ www.end-violence.org

Կարողություն 20 – Էթիկապես պատշաճ և ոչ ֆորմալ լրատվական հաղորդումներ

Սահմանում

- Անհրաժեշտ է, որպեսզի ԵՍՇԲ դեպքերի մասին լրատվամիջոցների լուսաբանումը լինի էթիկապես պատշաճ, տեղեկատվական, հավասարակշռված և հաղորդվի նրբանկատորեն, այնպես, որ զոհերի արժանապատվությունն ու իրավունքները հարգվեն ամբողջ ընթացքում: Լրագրողների և խմբագրերի համագործակցությունը ԵՍՇԲ դեպքերի կանխարգելմամբ և վերացմամբ զբաղվող բոլոր անձանց հետ խրախուսվում է:
- ԵՍՇԲ դեպքերի զոհերի հարցազրույցի և հաղորդում ներկայացնելու ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում նրանց՝ անձնական կյանքի անձեռնմխելիության և գաղտնիության իրավունքներին: ԶԼՄ-ների հաղորդումները չպետք է զոհերին պիտակավորեն, վնասեն կամ նվազեցնեն նրանց անվտանգությունը կամ անանունությանը, ինչպես նաև պետք է խուսափել նրանց այնպիսի դասակարգումից անհարկի բացասական ազդեցության կամ հետապնդման էթիկապես որ կոռեկտ կամ անհավասարակշռված հաղորդումների պատճառով:
- Զոհի լավագույն շահերն ինչպես էթիկայի, այնպես էլ իրենց իրավունքների շրջանակներում պաշտպանվում են ցանկացած այլ դիտարկումներից, ներառյալ՝ երեխաների շահերի պաշտպանության և երեխաների իրավունքների խրախուսման միջոցով:
- Լրատվամիջոցներն առանցքային դեր են խաղում ԵՍՇԲ դեպքերի շուրջ առասպելների և կարծրատիպերի հաղթահարման գործում:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- ԶԼՄ-ների դերը կարևոր է ԵՍՇԲ դեպքերի խնդիրը հասարակության գիտակցման գործընթացում ներկայացնելու և քաղաքական օրակարգում առաջ քաշելու համար: Զոհերի և հասարակության համար լավագույն արդյունքն ամբողջապես բխում է ԶԼՄ-ների՝ էթիկապես պատշաճ, հավասարակշռված և տեղեկատվական հաղորդումներից:
- ԵՍՇԲ դեպքերի վերաբերյալ հաղորդմանը պետք է մշակվեն նրբանկատորեն և զոհի բարեկեցությունը պետք է առաջնահերթ լինի:
- Նախաքննությունները կամ դատաքննությունները կարող են լինել կանխակալ, եթե բացահայտվի գաղտնի տեղեկատվություն՝ չմտածված, չճշգրտված կամ անբարեխիղճ հաղորդման արդյունքում:
- ԶԼՄ-ները ԵՍՇԲ դեպքերը լուսաբանելիս չպետք է գտնվեն որևէ քաղաքական կամ ռազմավարական ազդեցության ներքո: Սրա նպատակն է հավաստիացնել, որ զոհի շահերն առաջնային են, և որ իրավապահ մարմինները կանխակալ չեն նախաքննություն իրականացնելիս և զոհի անօգնական լինելու կարծրատիպը կվերանա:

Լավագույն փորձը

- ԵՍՇԲ դեպքերի հաղորդման չափորոշիչները կարող են կարգավորվել չորս տարբեր մակարդակներով՝ վարքագծի կանոնների միջոցով, որոնցով առաջնորդվում են մասնագետ լրագրողները, Ուղեցույցեր, համաձայն որի կառաջնորդվեն ԶԼՄ-ները, լրատվական կազմակերպությունների կողմից առաջնորդվող կանոնակարգի կառուցվածքով, երբ համապատասխան պատասխանատու մարմինները վերահսկում են ԶԼՄ-ների հաղորդման չափորոշիչները և օրենսդրությամբ՝ զոհերի իրավունքները պաշտպանելու համար:
- Երբեք չպետք է հրապարակվեն այնպիսի մանրամասներ, որոնք կարող են երեխա-զոհի նույնացմանը կամ վնասեն նրա անվտանգությունը կամ քրեական հետապնդման դադարեցման պատճառն հանդիսանան:
- Երեխա-զոհի հարցազրույցի ընթացքում կամ լուսանկարելիս պետք է ստանալ համապատասխան մեծահասակի և երեխա-զոհի համաձայնությունը:
- Երեխայի անան մնալը պետք է ապահովվի օրենքով, դատավարությունից առաջ, դրա ընթացքում և հետո:
- Կառավարությունները և ՀԿ-ները պետք է աջակցեն ԶԼՄ-ներին բարձրացնելու ԵՍՇԲ դեպքերի մասին իրազեկությունը և լրատվամիջոցներն ապահովեն երեխաների իրավունքների մասին հուսալի աղբյուրների տեղեկատվությամբ՝ վստահելի մեկնաբանության համար:
- ԶԼՄ-ների խմբագիրների, լրագրողների և իրավապահ մարմինների միջև պետք է առկա լինեն հաղորդակցման արդյունավետ և բաց շփումները, որպեսզի ապահովվեն հաղորդման ճշգրիտությունը, արդիականությունը և էթիկապես պատշաճությունը:
- ԵՍՇԲ դեպքերի էթիկական և տեղեկատվական ԶԼՄ-ների մասին տեղեկատվությունը պետք է ներառվի լրագրողների մասնագիտական հավատարմագրման շրջանակներում:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- ՅՈՒՆԻՍԵՖ-ը մշակել է ուղեցույցներ ԶԼՄ-ների և երեխաների իրավունքների մասին, որը նպատակ ունի ամրապնդել լրագրողների գիտելիքները երեխաների իրավունքների մասին և առաջարկել, թե ինչպես կարելի է ներկայացնել այս հիմնահարցերը տպագիր և հեռարձակվող ԶԼՄ-ներով: Լրացուցիչ տեղեկությունները հասանելի են www.unicef.org կայքէջում:
- Լրագրողների միջազգային ֆեդերացիան սկսել է համաշխարհային էթիկական լրագրության նախաձեռնություն, որը վերաբերում է աշխարհի տարբեր մասնագիտական մարմինների հաղորդումների ստանդարտներին: Լրացուցիչ տեղեկատվությունը հասանելի է www.ethicaljournalisminitiative.org կայքէջում:

Կարողություն 21 – Համընդհանուր տերմինաբանություն

Սահմանում

- Անհրաժեշտ է ԵՍՇԲ դեպքերին վերաբերող համընդհանուր համաձայնեցված տերմինաբանության կիրառում, որպեսզի տեղեկատվությունը և գաղափարներն հրատապ տեղեկացվեն բոլոր շահառուներին:

Ինչու՞ է այն անհրաժեշտ

- Համընդհանուր համաձայնեցված տերմինաբանության օգտագործումը կապահովի բոլոր շահագրգիռ կողմերի միջև փոխըմբռնման, բովանդակության և արձագանքի հետևողականությունը:
- Տերմինաբանության անհամապատասխան օգտագործումը կարող է հանգեցնել նույն հիմնահարցի վերաբերյալ տարբեր պատասխանների, օրենսդրության և:
- ԵՍՇԲ դեպքերին առնչվող տերմինաբանության միջազգային համաձայնագրի բացակայությունն ազդել հանցագործության վերացմանն ուղղված համաշխարհային պայքարի վրա. ազգային մակարդակով երեխաներին տրամադրվող պաշտպանության մակարդակներն անհամապատասխան են, սեռական շահագործման և սեռական բռնության տարբեր մեթոդների տվյալների հավաքագրումը և նույնականացումը ճշտգրիտ չէ և անճիշտ. միջազգային շահագրգիռ կողմերի միջև տեղեկատվության հաղորդակցությունը կարող է սխալ հասկացվել, իսկ շահերի պաշտպանության աշխատանքը խաթարվում է լեզվական և տերմինաբանական խառնաշփոթի պատճառով:
- «Մանկական պոռնոգրաֆիա» տերմինի շուրջ ընթացող բանավեճն ուղղակի օրինակ է առ այն, որ տերմինը մերժվում է բազմաթիվ իրավապահ մարմինների և երեխայի պաշտպանության միջազգային հանրության կողմից այն հիմքով, որ չի հանդիսանում լեզվական պատշաճ ձևակերպում և կարող է պատահաբար օրինականացնել երեխայի սեռական բռնությունը, քանի որ օգտագործվում է «պոռնոգրաֆիա» տերմինը:
- Միջազգային/անդրսահմանային ԵՍՇԲ դեպքերի համատեքստում ընդգծվում են համընդհանուր համաձայնեցված տերմինաբանություն չունենալու դժվարությունները: Սա կարող է ազդել քննությունների և քրեական հետապնդումների վրա, երբ նույն տերմինները կիրառվում են տարբեր գործողությունների/ հանցագործությունների վերաբերյալ՝ ստեղծելով իրավիճակի վերաբերյալ թյուրըմբռնում:

Լավագույն փորձը

- Տերմինաբանության և իմաստաբանության միջգերատեսչական ծրագիրը սկսվել է 2014թ.-ի սեպտեմբերին ECPAT International միջազգային հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ: Երեխաների սեռական շահագործման հարցերով աշխատանքային խումբը, որին մասնակցել են 18 հիմնական շահագրգիռ կողմերի մասնակիցներ երեխայի պաշտպանության ոլորտում, անցկացրել է հետազոտություններ և վերլուծություններ՝ մշակելու տերմինաբանության համաշխարհային մի շարք ուղեցույցներ: Դրանք հավանության են արժանացել կազմակերպությունների խմբի կողմից և մեկնարկել են 2016 թվականի հունիսին: Դրանք հայտնի են որպես Լյուքսեմբուրգյան ուղեցույցներ:
- Լյուքսեմբուրգյան ուղեցույցները հասանելի են անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն լեզուներով: Տարբեր լեզուների մոտեցումն այն է, որ տերմինաբանությունը ճշգրտորեն արտացոլի յուրաքանչյուր լեզվի նրբությունները և չհանդիսանա անգլերեն տեքստի լոկ բառացի թարգմանություն:

- Ուղեցույցները հասանելի են աշխարհի բոլոր երեխաների պաշտպանության հիմնական գործակալություններին և կազմակերպություններին, ինչպես նաև օրենսդիրներին և լրատվամիջոցներին, ինչն առաջարկում է գործնական ուղղություններ հաճախ օգտագործվող ԵՍԾԲ դեպքերի վերաբերյալ տերմինների բարդ որոնումներում:

Լրացուցիչ ուղեցույց և աջակցություն

- Լրացուցիչ տեղեկությունները հասանելի են www.luxembourgguidelines.org կայքում, որտեղ ներառված է կազմակերպությունների ցանկը, որոնք մասնակցել են ուղեցույցների մշակման աշխատանքային խմբում:

Սույն տպագրության թարգմանությունն իրականացվել է «Վերջ տա Ոնք Եվրոպայում երեխաների նկատմամբ առցանց սեռական շահագործմանը և սեռական բռնությանը» Եվրոպայի խորհրդի ծրագրի շրջանակներում:

Եվրոպայի խորհուրդը երախտագիտությամբ հիշատակում է «Երեխաների նկատմամբ բռնության վերացման հիմնադրամի» («Fund to End Violence Against Children») կողմից սույն ծրագրին տրամադրած ֆինանսական աջակցությունը: